


8287

Ա. Ա. ՃԴԱՆՈՎ

ԿՈՒՍՈԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԱԽԱՊԱՏՐԱՑՏՈՒՄԸ ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՄԻՍՏԵՄՈՎ,
ԿԱՏԱՐԵԼՔ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՅԵՎ,
ԿՈՒՍՈԿՑԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՀԱՄԱԳՈՏԱՑԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Զեկուցամ Համկ(ր)Կ Կենտղոմի Պինումութ
1937 թ. փետրվարի 26-ին



ԳՈՎԱՅՆԱՆ ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

Պանիստար բալը յիշեցնի, միացե՛ք

24 SEP 2006

ՅԱՐԱ
Ժ-39

Ա. Ա. ԺԴԱՆՈՎ

այս

09 DEC 2000



ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԽՈՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ
ԽՈՐՀՈՐԴԻ՝ ՆՈՐ ԸՆՏՐՈՒԿԱՆ ԱԽՏԵՄՈՎ
ԿԱՏԱՐԵԼԻՔ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՅԵՎ
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒԹՅՈՒՄԸ

Ձեկուցում Համեմատական կենտրոնի Պետական
1937 թ. փետրվարի 26-ին

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

ՇՐՋԱԴԱՐՁԸ ՅԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿՅԱՆՔՈՒՄ ՅԵՎ ՄԵՐ ԽԵԴԻՐՆԵՐԸ

Հնկերներ, ԽՍՀ Միության նոր Սահմանադրությունն
ընդունվելու կազմակցությամբ մենք պետք ե ԽՍՀՄ-ի Գե-
րագույն Խորհրդի և աշխատավորության դեպուտատների
Խորհուրդների ընտրությունները կատարենք՝ վերևից
մինչև ներքեւ նոր ընտրական սիստեմով։ Մեր կուսակցու-
թյան առջև ինդիր ե ծառացած՝ նախապատրաստվել ընտ-
րություններին։

Այդ նախապատրաստության բնույթը, նրա ծավալը,
մասշտաբը և կուսակցական աշխատանքի վերակառուցումը,
վոր կազմաձ և նրա հետ, վորոշվում են այն փոխակերպու-
թյունների խորությամբ, վորոնք բղխում են նոր Սահմա-
նադրությունից՝ մեր յերկրի քաղաքական կյանքի համար։

Նոր Սահմանադրությունը մտցնելը շրջադարձ ե նշա-
նակում յերկրի քաղաքական կյանքում։ Այդ շրջադարձի
ելությունն է՝ ընտրական սիստեմի հետազա ավելի դե-
մոկրացումը՝ Խորհուրդների վոչ լիովին հավասար ընտ-
րությունները հավասարով, բազմաստիճանը՝ ուղղակիով,
բացը՝ փակով փոխարինելու խմասով։

Նոր Սահմանադրությունը մտցնելը դեն ե զցում այն
բոլոր սահմանափակումները, վորոնք դոյլություն են ունե-
ցել մինչև այժմ այսպես կոչված ձայնագուրկների համար։

Յեթե առաջ, նախքան նոր Սահմանադրությունը մըտ-
ցնելը, Խորհուրդների ընտրությունները հավասար չեն,՝
ապա այժմ վերացել ե ընտրությունների հավասարությու-
նը սահմանափակելու անհրաժեշտությունը, և բոլոր քաղա-
քացիներն իրավունք ունեն հավասար հիմունքներով մա-
նակցելու ընտրություններին։

Յեթե առաջ իշխանության միջին և բարձր որդանների
ընտրությունները բազմաստիճան են, ապա այժմ, նոր
Սահմանադրության համաձայն, բոլոր Խորհուրդների ընտ-



6205
39

А. А. ЖДАНОВ

ПОДГОТОВКА ПАРТИЙНЫХ ОРГАНИЗАЦИЙ К ВЫБОРАМ
В ВЕРХОВНЫЙ СОВЕТ СССР ПО НОВОЙ ИЗБИРАТЕЛЬНОЙ
СИСТЕМЕ И СООТВЕТСТВУЮЩАЯ ПЕРЕСТРОЙКА
ПАРТИЙНО-ПОЛИТИЧЕСКОЙ РАБОТЫ

Доклад на Пленуме ЦК ВКП(б)

26 февраля 1937 г.

Государственное издательство политической литературы
Ереван 1939

բությունները կատարելու յեն բոլոր քաղաքացիներն անմիշականորեն՝ ուղղակի ընտրությունների միջոցով։

Եւթե առաջ, հին Սահմանադրության համաձայն, ընտրությունների ժամանակ քվեարկությունը կատարվում երաց և ըստ ցուցակների, ապա այժմ, նոր Սահմանադրության համաձայն, ընտրությունների ժամանակ քվեարկությունը լինելու յեւ գաղտնի և ըստ ընտրական չըջանների առաջարկած առանձին թեկնածությունների։

Վերջապես, Սահմանադրությունը մտցնում է համաժողովական հարցումն՝ այսպես կոչված ուժերենդում։

Ի՞նչ են նշանակում ընտրական սիստեմում կատարված այդ փոփոխությունները։

Դրանք նշանակում են խորհրդային որդանների նկատմամբ մասսաների ունեցած վերահսկողության ուժեղացումը և մասսաների հանդեպ խորհրդային որդանների ունեցած պատասխանատվության ուժեղացումը։ Նոր ընտրական սիստեմը կամբազնդի ժողովրդական ընտրյալների կազի ընտրող մասսաների հետ։ Նա հզոր խթան կհանդիսանա՝ բարելավելու խորհրդային որդանների աշխատանքը, վերացնելու մեր խորհրդային կազմակերպությունների աշխատանքի բյուրոկրատական թերությունները, ու խեղաթյուրումները, իսկ այդ թերությունները, ինչպես գիտեք, չառ եյական են։

Գաղտնի քվեարկությամբ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունք մտցիկելու հետեանքը կլինի մասսաների քաղաքական ակտիվության հետազա ուժեղացումը, աշխատավորների նոր խավերի ներդրավումը պետության կառավարման աշխատանքին։

Դրանով իսկ պրոլետարիատի դիկտատուրան դառնում է բանվոր դասակարգի կողմից հասարակության պետական դեկալարման ավելի ճկուն և, հետեարար, ամելի հզոր սիստեմ, պրոլետարական դիկտատուրայի բաղան ընդարձակում և, նրա հիմքն ավելի հաստատուն և գտանում։

Լենինիզմը սովորեցնում է.

«Պրոլետարիատի դիկտատուրան ունի իր ժամանակաշրջանները, իր հատուկ ձևերը, աշխատանքի

բազմազան մեթոդները։ Քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում առանձնապես աչքի յեւ զարկում դիկտատուրայի բանի կողմը... Սոցիալիզմի ժամանակաշրջանում, ընդհակառակը, առանձնապես աչքի յեւ զարկում դիկտատուրայի խաղաղ, կազմակերպչական, կուլտուրական աշխատանքը, հեղափոխական որինականությունը և այլն։ Բայց դրանից դարձյալ բնավլ չի հետևում, վոր դիկտատուրայի բանի կողմը չինարար վերացնում մեջտեղից վերացել և կամ կարող է վերանալ։ Ճնշման որգանները, բանակը և մյուս կազմակերպություններն անհրաժեշտ են հիմա, չինարարության մոմենտում, նույնպես, ինչպես քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում։ Առանց այդ որդանների առկայության անհնար և դիկտատուրայի վորևէ չափով ապահովված չինարարական աշխատանքը։ Զարկավոր չեւ մոռանալ, վոր հեղափոխությունը հաղթել և առաջմ ընդամենը միայն մի յերկրում։ Հարկավոր չեւ մոռանալ, վոր քանի դեռ կակապիտական շրջապատումը, կլինի նաև ինտերվենցիայի վունդը՝ այդ վատանդից բղխող բոլոր հետեանքներով։ (Ստալին, «Լենինիզմի հարցերի շուրջը»)։

Վոր մեր դիկտատուրայի խաղաղ, կազմակերպչական, կուլտուրական կողմերի կողքին չի վերացել նրա բոնի կողմերի անհրաժեշտությունը, ակնառու կերպով ցույց է տալիս Բուխարինի—Ռիկովի գործի մեր հենց նոր քննարկած հարցը։ Բանվոր դասակարգի դիկտատուրային այսուհետեւ ևս վիճակված է անօղոք ձեռքով ընկճել թշնամի կապիտալիստական դասակարգերի մնացորդների և Փաշիստական բուրժուազիայի գործակալներ՝ տրոյկիստների, զինովյեգականների, աջերի ու ժողովրդի մյուս թշնամիների դիմադրությունը։

Ըսկեր Ստալինը մեղ սովորեցրել է, վոր մեղ հարկավոր և բանվոր դասակարգի ուժեղ և հզոր դիկտատուրա, վորպեսզի հողմացրիդ անենք մեռնող դասակարգերի վեր-

չին մնացորդները և վոչչացնենք նրանց դողավարի մեջեւայությունները:

Դեմոկրատական ընտրություններ անցկացնելը շատ լուրջ գործ է: Դա մեր կուսակցության համար շատ լուրջ քննություն է՝ մասսաների հետ նրա ունեցած կապը, մեր կուսակցական կազմակերպությունների աշխատանակությունը և մասսաներում նրանց ունեցած հեղինակությունն առուգելու խմաստով: Ընտրությունների անցկացումը կապահնջի մեր կուսակցության բոլոր ուժերի հսկայական լաւագում:

Մեր յերկրի քաղաքական կյանքում տեղի ունեցող այդ շրջադարձն ըստ ամենայնի դիմումական առաջարկությունների կուսակցությունը պետք է դիմավորի այդ շրջադարձը և ապահովի իր դեկալար դերը յերկրի գերազույն որդանակերի ընտրությունների գործում:

Ի՞նչ է նշանակում դիմավորել և կուսակցության դեկալար դերն ապահովել գերազույն որդանների ընտրությունների ժամանակ: Ի՞նչ խնդիրներ պետք է լուծի կուսակցությունը:

Ամենից առաջ՝ պետք է նկատի ունենալ, վոր մեր աշխատաները գործ են ունենալու ըրության վորոշ նորության հետ: Մենք առաջին անգամն են, վոր ընտրությունները կատարում ենք ընտրական նոր սիստեմով: Մենք վարժված չենք ըստ առանձին թեկնածությունների, դադունք քլեարկության սկզբունքով և այլն ընտրություններ կատարուում ապարեղում: Դա վորոշ գժվարություն է ներկայացնում մեր կուսակցական կազմակերպությունների համար:

Յերկրորդ՝ դիմավորել մեր յերկրի քաղաքական կյանքում տեղի ունեցող շրջադարձը և դեկալարել ընտրությունները—նշանակում է ապահովել Սահմանադրության հաստատած ընտրական նոր սիստեմի լինակատար պահպանը, այսինքն՝ խստիվ պահպանել դադունքի քվեարկությամբ ընդհանուր, ուղղակի, հավասար ընտրական իրավունքի սկզբունքները: Այդ նշանակում են, վոր մեր կուսակցական կազմակերպություններն իրենց աչքի լույսի պետք է պահպանեն մեր նոր ընտրական որենքն ամեն մի խախտումից:

Յերրորդ՝ մեր կուսակցական կազմակերպությունները պետք է պատրաստ լինեն ընտրական պայքարի համար: Ընտրությունների ժամանակ մենք գործ ենք ունենալու թշնամական ազիտացիայի ու թշնամական թեկնածությունների հետ: Վոր այդպիսի հանրավորությունը ունեալ են, յերեսում են նրանից, վոր արդեն այժմ տեղի ունի հակախորհը պարզացին տարրերի վորոշ աշխուժացում, հատկապես առաջիկա ընտրությունների կազմակցությամբ: Մեր կուսակցական կազմակերպությունները պետք են ըստ ամենայնի զինված դիմավորեն թշնամական տարրերի փորձերը՝ ողտագործելու նոր Սահմանադրության տված լեզար կնարավորությունները:

Քանի ուսումնական մարդիկ նիրհում են և որորվում, թըլնամիներն արդեն գործում են և ուժեղ կերպով պատրաստվում են ընտրություններին:

Չորրորդ՝ գաղտնի ու անձնապես կատարվող քվեարկությունը, ի տարրերություն բաց և ըստ ցուցակների կատարվող քվեարկությունից, կնշանակի յուրաքանչյուր առաջարված թեկնածության համար կուսակցության կրած պատասխանատվության բարձրացումը: Ընտրված լինելու համար մեր թեկնածուները լավ պետք է հայանի լինեն այն շրջանի ընտրություններին, վորտեղ կառաջարվեն նրանք. նրանց գործունեյությունը պետք է լավ ծանոթ լինի ընտրություններին:

Գաղտնի քվեարկությամբ կատարվող ստուգումը կհանդիսանա մեր աշխատաղների ամենահիմնարկոր ստուգումը, վորովհետեւ գաղտնի քվեարկությունը շատ ավելի լայն հնարավորություններ ե տալիս մասսաների տեսակետից վոչ ցանկալի և վոչ պիտանի թեկնածությունները մերժելու համար, քան յեղել ե մինչև այժմ: Այդ պետք է վորոշակի պատկերացնել:

Հինգերորդ՝ պետք է հաղթահարել մեր կուսակցական ու խորհրդային վորոշ աշխատաղների մեջ յեղած վնասակար հոգեբանությունը, վորոնք կարծում են, թե ժողովը դիմունքի վատաշությունը կարելի յե ձեռք բերել ձրիաբար և կարելի յե հանգիստ քնել, սպասելով, վոր գեղուտատական մանդատները կհրամցնեն տանը, վորոտալից ծափերի տակ,

շնորհիվ իրենց նախկին ծառայությունների : Գաղտնի քվե-
արկության ժամանակ վշտահությունը ձրի չի ստացվի :

Մեղ մոտ կուսակցական և խորհրդային կազմակերպու-
թյուններում կա աշխատողների բավականին ստվար մի
խալ, վորոնք գտնում են, թե իրենց անելքներն, իսկա-
պես, վերջանում են այն ժամանակից, յերբ նրանք խորհրդի
անդամ են ընտրվում : Այդ են վկայում բազմաթիվ պատաս-
խանատու աշխատողների չաճախելը Խորհուրդների պլե-
նումներին, մեր Խորհուրդների դեպուտատական խմբակնե-
րին ու սեղիաներին, նրանց խուսափելը դեպուտատական
տարրական պարտականությունները կատարելուց :

Անհրաժեշտ է ջախջախել մեր աշխատողների հոգեբա-
նության մեջ յեղած նմանորինակ մնացուկները, պետք է
մեր աշխատողների մեջ դաստիարակել այն դիտակցությու-
նը, թե նրանք պատասխանատու յեն ընտրողների առջե,
նկատի ունենալով, վոր յուրաքանչյուր ընտրյալ հանդամա-
նորեն ու բազմակողմանի կերպով քննիլու և ստուգմելու
յե իրենց՝ մասսաների կողմից :

Կոպիտ սխալ կլիներ մինչև ընտրությունների մոմենտը
հետաձել այդ մնացուկների դեմ պայքարելը : Մենք ա-
ռանց հարազման պետք է ձեռնամուխ լինենք անշեղորեն
բարեկալու մեր խորհրդային կազմակերպությունների
աշխատանքը, նրանց կապը մասսաների հետ, ուժեղացնե-
լու մեր խորհրդային աշխատողների պատասխանատվու-
թյունը մասսաների առջե :

Վեցերորդ՝ հարկավոր է հենց այժմ աշխատողների մեջ
դաստիարակել այն դիտակցությունը, վոր նոր ընտրական
սխառելը նշանակում է շատ ավելի լայն հրապարակայնու-
թյուն խորհրդային կազմակերպությունների դործունեյու-
թյան մեջ և վոր նրանց դործունեյությունն ընթանալու յե
մասսաների աչքի առջե, վոր նրանց պատասխանատվու-
թյունը մասսաների առջե ավելի լիակատար է լինելու :
Խորհուրդների շատ դեպուտատներ—մեր կուսակցության
անդամներ—սովորել են պատասխանատու լինել միմիայն ի-
րենց կուսակցական կազմակերպության առջե : Խորհրդային
մեր շատ աշխատողներ այն մարդկանցից, վորոնք հակումն
ունեն դեպի բյուրոկրատիզմը, վորոնք խոշոր թերություն-

ներ ունեն աշխատանքում, պատրաստ են իրենց աշխատան-
քի մասին տասն անդամ Հաշիվ տալ կուսակցական կոմիտե-
յի բյուրոյի առջե, նեղ ընտանեկան շրջանում, քան հանդես
դալ խորհրդի պլենումում, քննադատել իրենց և լսել մաս-
սաների քննադատությունը : Պետք է վերջ տալ անպատաս-
խանատվության այլ պրակտիկային :

Յոթերորդ՝ գլխավորել յերկրի քաղաքական կյանքում
տեղի ունեցող շրջադարձը և ապահովել դեմոկրատական
բնադրությունները՝ նշանակում ե, վոր մեր կուսակցական
կազմակերպությունները չպետք է սպասեն, մինչև վոր
մասսաները նրանց ներքեւց հրեն դեպի քննադատություն,
մերժեն մեր թեկնածությունները, այլ իրենք պետք է
կանոնած լինեն քննադատության և անպետք թեկնածու-
թյունների մերժման գլուխ, առանց սպասելու նրանց տա-
պալմանը դադունի քվեարկության ժամանակ : Ընդվորում
մեր կուսակցական կազմակերպությունները պետք է սովո-
րեն բարեկամական քննադատությունը տարբերել թշնամա-
կանից : Մեղ մոտ հաճախ այնպես ե լինում, վոր մեր խոր-
հրդային որդանների գործունեյության առանձին թերու-
թյունների ու խեղաթյուրումների դեմ աշխատավորների
ունեցած դժողովությունը վնահատվում ու դիտվում է վոր-
պես թշնամական քննադատություն : Բարեկամական քննա-
դատությունը, վորը յերբեմն շատ սուր է լինում, թշնամու
քննադատությունից տարբերելու կարողությունը, մեր կու-
սակցական կազմակերպություններից պահանջում ե կուսակ-
ցական-քաղաքական դաստիարակության բարձր մակարդակ
և մեծ զգայունություն :

Նոր ընտրությունների ժամանակ կարող է պատահել,
վոր թշնամի տարբերը մեր թեկնածուների դեմ աղիտացիա
մղելու փորձեր անեն : Մեղ՝ աշխատավորներին հարկ է լի-
նում դժվարին բավականաչափ կամպանիաներ մղել մթեր-
ման աշխատանքի, զինարարության և այլ զանազան ճակա-
տամասերում, իսկ այդպիսի կամպանիաներն առանց վո-
րոշ ճնշման չեն կատարվում : Այդ մասնում ե բանվոր դա-
սակարգի գիկուտատուրայի համացողության մեջ : Այս ճն-
շումից մենք չենք հրաժարվում նաև այսուհետեւ և ծիծա-

զելի կլիներ հրաժարվել դրանից : Անշուշտ դեմագոգիս
կստեղծվի այդ գծով մեր աշխատողների ամեն տեսակ թե-
րություններն ուղցնելու ուղղությամբ : Խոսքը վերաբերում
է մեր դյուղմորհուրդների, շրջանային գործկոմների և այլ
հիմնարկների կաղըերին : Կուսակցական կազմակերպու-
թյունները պետք ե կարողանան իրենց պաշտպանության
առակ վերցնել այդ մարդկանց : Այդ չի կարելի աչքաթող ա-
նել :

Ութերորդ՝ անկուսակցականների հարցը : Շատ վնասա-
կար ու լտանդավոր կլիներ, յեթե նոր ընտրությունների
ժամանակ կրկնվեյին ընտրությունների հին պրակտիկայում
տեղի ունեցած սխալները, —այն ե՝ անուշադիր վերաբեր-
մունքը դեպի անկուսակցականների թեկնածությունները,
յերբ Խորհուրդներում կուսակցական ազդեցությունն ապա-
հովելու նպատակով, անկուսակցական թեկնածությունները
չեյին վայելում այն անհրաժեշտ ուշադրությունն ու ոժան-
դակությունը, վորոնք բարձում են դեկավարելու և մասսա-
ների հետ կազ պահպանելու բոլցեկիյան ըմբռնման հի-
մունքներից : Նկատի ունեցեք, վոր մեր յերկրում կոմու-
նիստները յերկու միլիոն են, իսկ անկուսակցականները «մի
քիչ» ամելի յեն : Հետեաբար, յեթե մենք ուղղում ենք գլխա-
վորել ընտրությունները, պետք ե ուժեղացնենք մեր ազգե-
ցությունը և մեր կազն անկուսակցականների հետ և ոժան-
դակենք, այլ վոչ թե հետ մզենք մասսաների վատահու-
թյունը վայելող անկուսակցական թեկնածությունները :

Սրանք են այն մի քանի հարցերը, վորոնք վերաբերում
են ընտրությունների նախապատրաստությունների դեկա-
վարմանն ու կազմակերպմանը : Նրանք հերթի յեն դրվել
վոչ թե հեռավոր հեռանկարների կարգով, այլ վորպես
մարտական, միանդամայն անհետաձելի ու կենսական
խնդիր :

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆ ԱՆՀԱՍՏԵՂԵԼԻ ՅԵ ԲՈԼՇԵՎԻԶՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՏ

Ի՞նչ ե պահանջվում կուսակցությունից, վորպեսի նա
կարողանա անցնել նոր, մինչև վերջը դեմոկրատական

ընտրությունների դլուխը : Վորոնք են այն գլխավոր պայ-
մանները, վորոնք ապահովում են յերկրի քաղաքական
կյանքում տեղի ունեցող շրջադարձի դեկավարումը կուսակ-
ցության կողմից :

Դրա համար պահանջվում է, վորպեսի կուսակցու-
թյունն ինքն անցկացնի. հետեւղական դեմոկրատական
պրակտիկա, վորպեսի նա ներկուսակցական կյանքում մին-
չև վերջը կիրառի դեմոկրատական ցենտրալիզմի հիմունք-
ները, ինչպես այդ պահանջում է մեր կուսակցության կա-
նոնադրությունը, վորպեսի կուսակցությունն ինքն ունենա
անհրաժեշտ այնպիսի պայմաններ, վորով կուսակցության
բոլոր որդաններն ընտրովի լինեն, վորպեսի կուսակցու-
թյան ներսում լիակատար չափով զարգանան քննադատու-
թյունն ու ինքնաքննադատությունը, վորպեսի կուսակցա-
կան մասսայի հանգեց կուսակցական որդանների ունեցած
պատասխանատությունը լիակատար լինի և վորպեսի
ինքը, կուսակցական մասսան, լիովին ակտիվացած լինի :

Լենինիզմը սովորեցնում է, վոր բանվոր դասակարգի
ակտիվության վերելքը, վորը ձգտում ենք մենք ճեռք բե-
րել՝ խորհրդային դեմոկրատիզմը մինչև վերջը կիրառելու
կապակցությամբ, —լուրջ և մեծ գործ ե : Բանվոր դասա-
կարգի ակտիվությունը բարձրացնելու համար ամենից ա-
ռաջ հարկավոր և ակտիվացնել իրեն՝ կուսակցությա-
նը : Հարկավոր ե, վոր ինքը կուսակցությունը հաստատա-
պես ու վճռաբար վոտք դնի ներկուսակցական դեմոկրա-
տիայի ուղին, վոր մեր կազմակերպությունները մեր շինա-
րարության հարցերի քննարկմանը ներդրավիեն կուսակցու-
թյան այն լայն մասսաներին, վորոնք կերտում են մեր կու-
սակցության բախտը : Առանց դրան ամելորդ և խոսել բան-
վոր դասակարգի ակտիվացման մասին : Այդ և սովորեցնում
մեզ ընկեր Ստալինը :

Կարելի՞ յե արդյոք ասել, վոր մեր բոլոր կուսակցա-
կան կազմակերպություններն արդեն պատրաստ են կատա-
րելու այդ պայմանները և թե նրանք արդեն վերակառուց-
վել են դեմոկրատական ճեռուկ:

Դժբախտաբար, լիակատար համոզվածությամբ չի կա-
րելի ասել այդ :

Վորո՞նք են այն փաստերը, վորոնք վկայում են, թե
այդ չի կարելի լիակատար համողվածությամբ առել:

Դրա մասին ե խոսում կուսակցության կանոնադրու-
թյունը և ներկուսակցական դեմոկրատիզմի հիմունքները
խախտելու պրակտիկան վորոշ կազմակերպություններում:

Վորո՞նք են այդ խախտումները:

Ինչպես հայտնի յէ, կուսակցության կանոնադրությու-
նը թելադրում և սկզբնական կազմակերպությունների կո-
միտեների ընտրությունները կատարել տարին մի անգամ,
քաղաքային ու շրջանային կոմիտեներինը՝ տարին մի ան-
գամ, մարզային, յերկրային կոմիտեներինը և աղջային
կոմիտեների կենտրոնական կոմիտեներինը՝ մեկ և կես
տարին մի անգամ։ Այդպիս և ասում կանոնադրությունը։

Յեթե դիմենք պրակտիկային, ապա փաստերը խոսում
են այն մասին, վոր կանոնադրության այդ պահանջը մեզ
մոտ խախտված և մի շարք կազմակերպություններում։
Վերջին յերկու-յերեք տարում մարզային, յերկրային կո-
միտեների և աղջային կոմիտեների կենտրոմների ընտրու-
թյունները կատարվել են միմիայն այն կազմակերպություն-
ներում, վորոնք առաջին անգամն են ստեղծվել նոր մարզեր
կազմվելու կապակցությամբ (Կալինինի, Կրասնոյարսկի,
Ռմուկի, Ռիենրուրդի և Յարուլավլի կազմակերպություննե-
րը)։ Մեր մարզային, յերկրային կոմիտեների և աղջային
կոմիտեների կենտրոմների, քաղկոմների, շրջկոմների և
սկզբնական կուսկոմիտեների մեծ մասը գոյություն ունի
կուսակցության XVL համադրումարի ժամանակաշրջանից,
այսինքն այն ժամանակաշրջանից, յերբ տեղի յէ ունենում
կուսորդաների ընտրությունների ընդհանուր կամանիսա։
Սադ դրությունից, ինչպես արդեն ասացի, բայց առություն
են կազմում նոր յերկրներն ու մարզերը, ինչպես և առան-
ձին շրջանային ու քաղաքային կազմակերպություններ,
դիմակուրապես կուսակցական աշխատանքում տեղի ունեցած
ձախողումների կապակցությամբ։

Նշանակում ե՝ մեր կուսակցության որենքները խախտ-
ված են, թեպետ մենք յերգլում ենք կանոնադրությամբ,
անդիր ենք անում կանոնադրությունը խմբակներում, կուս-

փաստաթղթերի ստուգման ու փոխանակման ժամանակ
կուսակցության անդամներից պահանջել ենք գիտենալ կա-
նոնադրությունը։ Ստուգումից պարզվում է, վոր մենք
ինքներս անթույլատրելի կերպով լիբերալ վերաբերմունք
ենք ցույց տալիս մեր սեփական կուսակցական որենքնե-
րին։

Այնուհետև, մեր կուսակցության կանոնադրությունը
պահանջում և կուսակցության բոլոր ղեկավար որդանների
ընտրականությունը վերևում մինչև ներքեւ։ Այդ և պահան-
ջում մեր կուսակցության կազմակերպական կառուցման
հիմնական սկզբունքը՝ դեմոկրատական ցենտրալիզմի սկզբ-
բունքը։

Կուսակցության կանոնադրության § 18-ն ասում է,
վոր «Կուսակցության կազմակերպական կառուցվածքի ղե-
կավար սկզբունքը դեմոկրատական ցենտրալիզմն է, վորը
նշանակում է»

ա) կուսակցության բոլոր ղեկավար որդանների ընտ-
րականությունը վերևում մինչև ներքեւ։

բ) կուսակցական որդանների պարբերական հաշվե-
տվությունն իրենց կուսակցական կազմակերպությունների
առջև։

գ) կուսակցական խիստ կարգապահություն և փոքրա-
մասնության յենթարկվելը մեծամասնությանը։

դ) բարձրագույն որդանների վորոշումների անողայման
պարտադիր լինելն ստորին որդանների և կուսակցության
բոլոր անդամների համար»։

Մեր կուսակցության այդ հիմնական կազմակերպական
սկզբունքը մի շարք կազմակերպություններում խախտված
է։ Պենումի անդամներին, հավանորեն, արդեն հայտնի
յէ, թե մեր կուսակցական գործի համար ինչպիսի վնասա-
կար հետևանքների հասցրեց կուսակցության կանոնադրու-
թյան խախտման պրակտիկան Կիեվի, Ազով-Սևսովյան և
այլ կազմակերպություններում, վորաեղ կանոնադրության
մոռացումը՝ ընտրականությունից գեղեցի կուսակցական աշ-
խատմանքի աղաղակող թափթփածությունը շեղվելու խմաս-
տով՝ հենց նպաստեց թշնամական տարբերի սողուկմանը
կուսակցական ղեկավար որդանների մեջ։

Հնարականության ասպարեզում մեր կուսակցության կանոնադրության այդպիսի ամենալուրջ խախտում եր հանդիսանում վոչչով չարդարացվող այն տարածված ոլրակտիկան, յերք զանազան զեկավար աշխատողներին կոռպտացիայի յեն յենթարկում վորակս կուսակցական կոմիտեների, շրջկոմների, քաղկոմների, մարզկոմների, յերկրկոմների և աղջային կոմկուսակցությունների կենտկոմների պլենումների անդամ:

Համկ(բ)կ կենտկոմի տրամադրության տակ յեղած տվյալներն ասում են, վոր կոռպտացիայի վնասակարարակտիկան արժատացել և ավելի խորն ե գնացել: Կոռպտացիայի ոլրակտիկան խախտում ե կուսակցության անդամների որինական իրավունքը՝ մասնակցելու իրենց զեկավարորդանների ընտրություններին: Զե՞ վոր կոռպտացիայի ժամանակ կուսակցության անդամները գրկում են ընտրություններին մասնակցելու հնարավորությունից, վոչպետանի ժեկնածուներին մերժելու հնարավորությունից, նրանց կարծիքն առհասարակ չեն հարցնում, վորովհետեւ կոռպտացիան կատարվում ե պլենումում:

Կոռպտացիան կիրառվում ե չափազանց լայն կերպով: Այդ մի արատ ե, վորով տառապում են մի ամբողջ չարք կաղմակերպություններ:

Մարզկոմներում, յերկրկոմներում, աղջային կոմկուսակցությունների կենտկոմներում վորակս պլենումների անդամ կոռպտացիայի յենթարկվածները կազմում են 11,6 տոկոս: Այս միջին թիվն է: Առանձին կաղմակերպություններում կոռպտացիայի յենթարկվածների տոկոսը հասնում է մինչև 22,8%-ի (Կիելի կաղմակերպություն) և նույնիսկ մինչև 26,2 տոկոսի (Բելոռուսիա), այսինքն՝ պլենումի քառորդ մասից ավելին կոռպտացիայի յենթարկվածներ են:

Շրջկոմների և քաղկոմների կազմի մեջ կոռպտացիայի յենթարկվածներ կան՝ Մոսկվայի կաղմակերպության մեջ՝ 17 տոկոս, Լենինգրադի՝ 17,2 տոկոս, Ազով-Սևծովյան՝ 17,5 տոկոս, Դնեպրոպետրովսկի՝ 26,7 տոկոս, Բելոռուսիայի՝ 28,9 տոկոս, Վորոնեժի՝ 29,8 տոկոս, Հայկական՝

ՅՅ տոկոս, այսինքն՝ համարյա մեկ յերրորդ մասը կոռպտացիայի յենթարկվածներ են:

Մարզային կազմակերպություններում շրջկոմների ու քաղկոմների բյուրոների կազմի մեջ կոռպտացիայի յենթարկվածների տոկոսը միջին հաշվով տասուանուում ե ընտրության մարզում, Հայաստանում, Իվանովյան ու Կարելիայի կազմակերպությունների ու քաղկոմների բյուրոների անդամների կեսից ավելին կոռպտացիայի յենթարկվածներ են: Այսուեղ արդեն գլուխ չես հանի, թե ինչ ե մնացել որինական կազմից, վորն իր սկիզբն առնում ե ընտրություններից:

Կոռպտացիայի թափն այնտեղ ե հասնում, վոր, որինակ, Կիեկի մարզկոմի պլենումում 1934 թվականի Հոկտեմբերի 19-ին պլենումի կազմի մեջ կոռպտացիայի յենթարկել միանդամից 14 հոգի, և այդ թվում Աշրաֆյանին, Զենիսին, Սենչենկոյին, Տողերին, ուրիշներին, վորոնք ներկայում մերկացված են վորակս կուսակցության թշնամիներ:

6205
39 Խարկովում, կուսակցության քաղկոմում, քաղաքային կուսակցական IV կոնֆերենցիայում ընտրված՝ քաղկոմի 158 անդամներից և 34 թեկնածուներից միացել են միայն 59 հոգի: Այդ կազմը չի կարելի անվանել որինական, վորովհետև մնացել ե ընտրվածների միայն մեկ յերրորդ մասը: Իսկ վերջին կուսակցական կոնֆերենցիայից հետո անցած ժամանակամիջոցում քաղկոմի կազմի մեջ կոռպտացիայի յենթարկվել 61 հոգի, ըստվորում քաղկոմի բյուրոն, բացառությամբ մեկ ընկերոջ, ամբողջապես կաղմրված ե կոռպտացիայի յենթարկվածներից:

Զեղ հայտնի յե, թե կուսակցական կաղմակերպության մեջ գործերի ինչպիսի վիճակի հասցըեց Խարկովում գոյություն ունեցող այս գրությունը:

Յեթե դառնանք կուսակցության առանձին շրջանային կոմիտեներին, ապա, անշուշտ, դուք ինքներդ ել բավականաչափ ընդարձակ նյութ կունենաք ձեր տրամադրության տակ կոռպտացիայի վերաբերյալ: Յես կարծում եմ, վոր

մենք ունենք մեկ տասնյակից ավելի շրջկոմներ, վորտեղ շրջկոմի անդամների մեծամասնությունն ընտրվածներ չեն, այլ կոռպտացիայի յենթարկվածներ։ Որինակ՝ Մալո-Արխանդելսկի շրջանում (Կուրսկի մարզ) 23 հոգուց 18-ը կոռպտացիայի յենթարկվածներ են, Մցենսկի շրջանում (Կուրսկի մարզ) 26 հոգուց կոռպտացիայի յենթարկվածներ են 22-ը, Գոմելի քաղկոմում (Բելոռուսիա) 52 հոգուց կոռպտացիայի յենթարկվածներ են 40-ը, Որանիենբաումի շրջկոմում (Լենինգրադի մարզ) 22 հոգուց կոռպտացիայի յենթարկվածներ են 15-ը, Ռւստյուժենսկի շրջանում (Նույնայի մարզի) 12 հոգուց կոռպտացիայի յենթարկվածներ են 11-ը և այլն։

Առանձին քաղկոմների ու շրջկոմների բյուրոների կազմի մեջ կոռպտացիայի պրակտիկան կիրառվում է նույնպես լայնորեն։ Ուշանովսկի քաղաքային կոմիտեյում բյուրոյի 12 անդամներից 11-ը կոռպտացիայի յենթարկվածներ են։ Շչուշանսկի շրջանային կոմիտեյի (Չելյաբինսկի մարզ) բյուրոյի բոլոր անդամները կոռպտացիայի յենթարկվածներ են։ Սեմիպալատինսկի շրջկոմի (Արևելյան Ղազախստանի մարզ) բյուրոյի բոլոր անդամները կոռպտացիայի յենթարկվածներ են։ Ասթրեսովսկի քաղկոմի (Սվերդլովսկի մարզ) բյուրոյի բոլոր անդամները կոռպտացիայի յենթարկվածներ են և այլն։

Կոռպտացիայի պրիոմներն այնտեղ են հասել, վոր յերեմն կոռպտացիայի յենթարկում կամ թե պլենումի կազմից հեռացնում ե փոքրամասնությունը, այսինքն՝ որինական քվորումի մասին այստեղ վոչ մի խոռք լինել չի կարող։ Այդ ցույց ե տալիս, վոր քվորումի հասկացողությունը մի ամբողջ շարք տեղերում ջնջվել ե, կորավել։ Որինակ, Խարկով քաղաքի Լենինյան ռայոնում 1936 թվականի ապրիլի 4-ին ռայկոմի պլենում ե հրավիրվում՝ ակտիվիտանակցությունը, վորտեղ հարց ե դրվում ռայոնական կոմիտեյի կազմից մի ամբողջ շարք մարդկանց հեռացնելու մասին։ Զնայած վոր բավականաշատ ժամանակ եր անցել կենտրոնի այն հայտնի վորոշումից հետո, վոր ակտիվիտանակցությունը պետք ե տեղի ունենան պլենումներից անջատ։

այնուամենայնիվ, ռայոնական կոմիտեյի պլենումը գումարվում և ակտիվիտան միասնի հետ միասնի։ Ինչպէս համար եր հարկադրությունը այդ վորովհետեւ պլենումի կազմում ընտրովի անդամները «պակասում ենին»։ Քաղկոմի անդամներից ներկաս երին 10 թե 11 հոդի, սակայն պլենումն իր կազմից հանեց 12 հոդու։ 10 հոդին կուլ տվին տասներկո՞ւ հոգու (ծիծաղ)։

Հնկերներն, ըստ յերեսութին, մոռացել են, վոր նույնիսկ կուսակցության անլեզալ գոյության շրջանում, յերբ կոռպտացիան բղխում եր անհրաժեշտությունից, այն գըրվում եր մի ամբողջ շարք սահմանափակող պայմանների մեջ։

Այդ գիու քիչ ե, վոր պլենումներն են կոռպտացիայի յենթարկում։ Կան կազմակերպություններ, վորոնք զնում են ամենի հեռուն։ Որինակ, Կիրովյան մարզի Տուժինսկի շրջկոմի պլենումը վորոշում եր կայացրել, վորի համաձայն բյուրոյի նոր կազմին հանձնարարվում եր կոռպտացիա կատարել շրջկոմի անդամների կազմի մեջ։ Պենումի այդ վորոշման հիման վրա շրջկոմի բյուրոն կոռպտացիայի յեր յենթարկել 7 հոգու և կոռպտացիան պլենումում հաստատել միայն 5 ամսից հետո, ըստվորում շրջկոմի այդ 7 անդամների հաստատման ժամանակ ներկա յեն յեղել շրջկոմի պլենումի՝ որինական կերպով ընտրված միայն 6 անդամ։

Հնորականությունը խախտելու և այն կոռպտացիայով փոխարինելու արակտիկան ընդգրկել ե չափազանց շատ թվով զեկավար կազմակերպություններ, իսկ վերջիններին թողտվության պայմաններում նույն ճանապարհով գնացել են նաև սկզբնական կուսակցական կազմակերպությունները։ Մեզ մոտ, Լենինորբագում, որինակ, Կանոններսկի գործարանի կուսակցական կոմիտեն ընտրված ե յեղել մինչև XVII համազումարը։ և 3 տարվա ընթացքում, այն ժամանակակ, յերբ կուսակցական կոմիտեյի կազմը 7 հոդի յեր, կոռպտացիայի յեն յենթարկել 22 հոդի, այսինքն՝ կուսակցական կոմիտեն յերեք անդամ փոխել ե իր կազմին առանց նորման ընտրությունների։

Կիրովյան գործարանում ընտրվածների կազմից մնացել

Են Յ հոդի, իսկ մնացածները բալորը կոռուպտացիայի յենթարկվածներ են:

Ժողովական գործարանի կուսակցական կոմիտեյում տարբեր ժամանակներում կոռուպտացիայի յեն յենթարկվել 31 ժարդ:

Այն կապակցությամբ, վոր ընտրությունների ժամկետների խախտումը և կոռուպտացիան մեղ մոտ տարածված յերբեռյիթ են գաղճել, մի շարք կազմակերպություններում մոռացել են, թե ում են ընտրած յեղել: Հենց դրա հիման վրա կարող ելին ստուգվել այնպիսի փաստեր, վորոնց մասին դուք յերեկ կարդացիք «Պրավդա»-յում, յերբ ՌԴԿօստում կորցրած են յեղել կուսակցության մարզային կոմիտեյի անդամ ընկեր Ռէյնիկովին, և նրա մասին հիշել են յերկու տարուց հետո; յերբ նա անհանդստացած այն բանից, վոր իրեն վոչ վոք չի հշում և չի կանչում, ինքն և ներկայացել մարզային կոմիտե:

Լենինգրադի մարզում, Բորովչիչում՝ «Կրասնի Կերամիկ» գործարանի կուսակազմակերպության մեջ, 1937 թվականի հունվարի 4-ին դրված ե յեղել կուսակցական կոմիտեյի լրացուցիչ ընտրությունների հարցը: Կարդում եմ ըստ արձանագրության. «Կուսակցական կոմիտեյի քարտուղար ընկ. Ռողիկոնովն ինֆորմացիս յե տալիս կուսկոմիտեյի կազմը «գողկումնատալ կերպով ճշտեր» վերաբերյալ կուսակցական ժողովի կողմից իրեն տրված հանձնարարությունը կատարելու մասին: Նա հայտնեց, վոր կուսկոմիտեյում յեղած փաստաթղթերի համաձայն, կուսկոմիտեյի անդամներ են հանդիսանում Սվիբելսկին, կուսկոմիտեն, Դանիլովը և Ռողիկոնովը: Կուսկոմիտեյի ցուցակի մեջ կան, բայց փաստաթղթերով չեն հաստատվում Փրոմովան, Սոկոլովը, Կալինինը: Վորոշեցին պարզություն մտցնել կուսկոմիտեյի կազմի մեջ և լրացուցիչ կերպով նրա կազմում ընտրել աշխատունակ ընկերների»:

Ի միջի այլոց, Հենց ժողովում կուսակցական կոմիտեյի յերկու անդամ, վորոնց համարում ելին որինականորեն ընտրված, կտրականապես հրաժարվում ելին այդ բանից, նրանց ջերմորեն համոզում ելին: Կուսկոմիտեյի քարտու-

գարը հետո պատմում եր կուսկոմիտեյի անդամներին «վարոններու» վերաբերյալ իրեն տրված հանձնարարությունը կատարելու գժվաբությունների մասին. «Ո՞վ, փնտուեցի, փնտուեցի կուսկոմիտեյի անդամներին, հաղիպ դառանքանց»:

Այսպես և զրությունը կուսակցական որդանների ընտրականության վերաբերյալ մեր կուսակցության որենքների կոպիտ խախտման և ընտրականությունը կոռուպտացիայի պրակտիկայով փոխարինելու ասպարեզում, մի պրակտիկա, վորն անհամատեղելի յե մեր կուսակցության վոդու և տրադիցիաների հետ:

ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՆԽԱԽՏ ՈՐԵՆՔՆ Ե

Իրենց՝ ընտրությունների պրակտիկայի մասին: Ընտրությունների մեխանիկան մեղ մոտ հաճախ այնպիս և կառուցված, վոր կուսակցության անդամները զբկված են լինում թեկնածությունների վերաբերյալ ազատ կերպով արտահայտվելու, անընդունելի թեկնածուներին քննադատելու և մերժելու իրավունքն ուղարկործելու հնարավորությունից: Ընտրությունների կազմակերպումն ուղղված ե վոչ թե այն բանին, վոր ազակովի յուրաքանչյուր թեկնածությունը կուսակցական մասսայի կողմից սուուղելու իրական հնարավոր և շուտ, ավելի հասարակ ձևով անցկացվեն ընտրությունները և ազատվեն այս կամ այն թեկնածության վերաբերյալ կուսակցական մասսաների ձանձրացուցիչ քննադատությունից: Մեղ մոտ սովորաբար գրությունն այսպիս և լինում: Կուսակցական կոմիտեյի քարտուղարը կոնֆերենցիայից մի քանի որ առաջ իր ծոցատերի անկյունում ինչ-վոր մի անդ թեկնածուների նախնական նշում և կատարում: Այնուհետև հրավիրվում ե քարտուղարների խորհրդակցություն, վորտեղ ձևակերպվում ե ցուցակը: Այնուհետև թեկնածուների քննարկումն անցնում ե «սինի կոնվերտի», ինչպես մեղ մոտ անվանում են սենյորեն-կոնվենտը, և գելեցացիաների խորհրդակցությանը: Թեկնածությունների քննարկումն այսպիսով սպառվում ե զանազան

փակ նախնական խորհրդակցություններում «ընտանեկան» կարգով, առանց առանձին «դիմացավանքի»։ Միանգամայն պարզ է, վոր յեթե քարտուղարների և դելեղացիաների խորհրդակցությունները հարցը կանխորոշել են, ապա չափեց դուրս զժվար և մի վորեւ թեկնածություն մերժել ընդհանուր ժողովում կամ կոնֆերենցիայում։ Կոնֆերենցիաներում թեկնածությունների չուրջը մտքերի փոխանակություն, իբրև կանոն, չի բացվում, քվեարկությունը կատարվում և ցուցակով և վոչ անհատապես, և այլպիսով՝ ընտրական պրոցեդուրան վերածվում և հասարակ ձեւականության։ Կոնֆերենցիաներում արագության կուրս և վերջվում։ Նախագահ նստեցնում են այնպիսի մարդու, վորը թերը վեր քաշած՝ ընտրությունները ցուցակով «պատեցնում ե» մի քան բողեյում։ Այնտեղ ստացվում և նաև լիակատար միակամության ցուցադրում և առարկությունների համար ել ըստ երտեքյան հնարավորություն չկա։ Փոխանակ մարդկանց հնարավորություն տալու հենց կոնֆերենցիայում մասնակցելու քննարկմանը, հնարավորություն բաց անելու առաջադրման թեկնածությունների լայն քննադատության և մերժման համար, ամբողջ դործը հանդեցվում և նեղ կազմակերպական «տեխնիկայի», վորը հետապնդում և մեկ նպատակ՝ ցանկապատմել կուսակցական ժառանական քննադատությունից։

Այսպիսի պրակտիկան անհամատեղելի յե մեր կուսակցության վողու և տրամիցիաների հետ և այն ինդիբների հետ, վորոնք կանգնած են մեր առջե։ Դա կուսակցության անդամի որինական իրավունքների քողարկված խախտումն և հանդիսանում, կուսակցական դեմոկրատիայի խախտում։

Կոսպացիայի մասին յես կցանկանայի անել ևս մեկ դիտողություն։ Յես ցանկանում եմ մատնանշել մեր կուսակցության կենտրոնական կոմիտեյի փորձը։ Յեթե տեղական աշխատողներն ավելի լավ սովորեցին կենտրոնական կոմիտեյից, մենք թույլ չեցինք տա կոսպացիայի այլպիսի սանձարձակություն, վորը տեղի յե ունեցել մի շարք կազմակերպություններում։ Զե՞ վոր կենտրոնական կոմիտեն իր գոյության ընթացքում վոչ մի անդամի ու թեկնածուի կոսպացիայի չի յենթարկել կենտրոմի կազմի մեջ։ Կենտ-

գոնական կոմիտեյում այդպիսի պրակտիկա կոյտություն չունի։

Ներկուսակցական դեմոկրատիզմի հիմունքների պահպանման գործում մյուս լուրջ թերությունը կուսակցական զեկավացների, կուսակցական կոմիտեների քարտուղարների լայնորեն տարածված նշանակման սիստեմն ե։ Անհրաժեշտ ե այլ պրակտիկան փոխել այն ուղղությամբ, վոր յեթե կուսակցական կոմիտեն նկատի ունի փոփոխություն կատարել ստորադաս կազմակերպության կուսակցական դեկազմարության կազմի մեջ, ապա նու թեկնածությունը նշելով, պարտավոր և նախքան այն վերադաս կուսակցական ինստանցիայի հաստատությանը ներկայացնելը քննության դնել այն կազմակերպության առաջ, ուր նախատեավում և ուղարկել քարտուղարին, և գրանից հետո միայն դիմել վերադաս կազմակերպությանը՝ սանկցիա ստանալու համար։

Մենք կուսակցական կոմիտեների քիչ քարտուղարներ չունենք, վորոնք ընտրված չեն կուսակցական կոմիտեյի կազմի մեջ։ Յես այստեղ կարող եյի հիշատակել միքանի տասնյակի մարդկանց անուններ, վորոնք, կուսկոմիտեների քարտուղարներ լինելով, ընտրված չեն կուսկոմիտեների կազմի մեջ։ Ստանում են նշանակումը, ստանում են ուղեղիրը, գալիս են և միանդամից նստում աշխատանքի, իսկ հին քարտուղարն, իբրև կանոն, հաշիվ չի տալիս։ Մեզ մոտ ուժեղ կերպով զարդացած են «ինքնահաշվետվությունները», բայց կուսակցական կոմիտեների հաշվետվությունը կուսակցական մասսաների առջև զարդացած և բացահայտուեն անբավարար կերպով։

Ինքնահաշվետվությունների վերաբերյալ։ Այն ձեռով, ինչպես մեղ մոտ տեղի յեն ունենում կոմունիստների ինքնահաշվետվությունները, դրանք բյուրոկրատական ծաղը են հանդիսանում կուսակցության անդամների նկատմամբ։ Մեծ մասամբ ինքնահաշվետվությունները կապված են կոմունիստի անձնական կյանքի մեջ, ընտանեկան կյանքի մեջ պեղումներ կատարելու հետ, բայց բնավ վոչ մասսաների մեջ նրա ավանդարձային գերն ու աշխատանքը հայտնաբերելու հետ։ Ինչի՞ յեն հանդում ինքնահաշվետվությունները։ Այս

մասին վկայում են վորոշ փաստեր։ Որենքուրդի մարզի Մատվեյևյան շրջանի Զերժինսկու անվան կոլտնտեսության կուսակցական կազմակերպությունը լուսմ է կոմունիստ Սիկորյանի ինքնահաշվետվությունը։ «Թերթեր չի կարդում և գուրս չի գրում։ Կողջ հետ, վոչինչ, լավ և յոլա դնում, յերեխաների հետ նույնպես. . . Հաշվի առնել, վոր Միկորով բավարար չափով չի դաստիարակում իր ընտանիքին»։ Այս տիպիկ ինքնահաշվետվություն ե։

Նույն այդ կազմակերպությունը կուսակցության անդամ Մաղինի ինքնահաշվետվության առթիվ, վորը ծեծելիս և լինում իր կնոջը, արձանագրել ե. «Այլևս ընտանեկան հիմարություններ թույլ չտալ։ Ամենակարճ ժամկետում կանոնավորել ընտանեկան հարաբերությունները»։ (Ընդհանուր ծիծաղ)։

Հազախստանում, Ամոսովի անվան խորհտնտեսության մեջ լսում են կոմունիստ Սալիրովի ինքնահաշվետվությունը։ Բնդունվում ե կարճ ու կտրուկ մի վորոշում. «Լացին—Սալիրովի ինքնահաշվետվությունը։ Վորոշեցին—Սալիրովին ձերբակալել»։ (Ընդհանուր ծիծաղ)։

Չայներ—ինչի՞ համար։

Փդանով—Այստեղ ուրիշ հարց և ծագում. կուսակցական կազմակերպությունն իրավունք ունի՞ արդյոք ձերբակալելու իր անդամներին. մարդը հաշիվ տալով՝ իր դլմինոյին ե բերել։

Շատ կուսակցական կազմակերպություններում նվազեցված ե պլենումների, վորպես կոլեկտիվ զեկավարման որպանների, գերը։ Պլենումի նիստեր գումարվում են հաղաղեալ, ավելի շատ հանդիսավոր կամ ընդհանուր հարցեր քննարկելու համար. տեղական աշխատանքի հարցեր հաղաղեալ են դրվում։ Ընտրությունների վերաբերյալ հարցեր և այլ հարցեր, ինչպես յես արդեն ասացի, քննարկվում ե վճռվում են անհրաժեշտ քվորումի բացակայությամբ։

Գորկու մարզի Վաչսկի շրջկոմը 1936 թվականի ընթացքում չի հարվիրել վոչ մի պլենում։ Դնեսղորովերովովսկի մարզի Վեսելովսկի շրջանում 10 ամսվա ընթացքում վոչ մի պլենում չի գումարվել։ Զելինսկի շրջանում, Թաթարիայում և Թաթարիայի մի շարք այլ շրջկոմներում 1936 թվա-

կանին 7—8 ամսվա ընթացքում չի գումարվել վոչ մի պլենում։ Ել ո՞ւր ե այստեղ կոլեկտիվ դեկավարությունը։

Մեր ընտրական կազմակերպությունների գերի նվազեցման գծով նույնպիսի թերություններ կան նաև սկզբնական կուսակցական կազմակերպություններում։

Բանաձևի նախագծի մեջ ցուցում կա այն մասին, վոր մենք պետք ե ապահովենք այնպիսի դրություն, վորի ժամանակ սկզբնական կուսակզմակերպություններում ապահոված լինի կուսակոմիտեներն ընդհանուր գործարանային ժողովներում ընտրելու կարգի խիստ պահպանումը, թույլ չտալով, վոր ընդհանուր ժողովները փոխարինվեն կոնֆերենցիաներով։ Այստեղ ել հենց մատուանչվում ե մի շարք սկզբնական կուսակզմակերպություններում գոյություն ունեցող այն պրակտիկան լիկվիդացիայի յենթարկելու անհրաժեշտությունը, յերբ փաստորեն վերացվում են ընդհանուր ժողովները և վերջիններս փոխարինվում են ցեխային ժողովներով ու կոնֆերենցիաներով։

Պատկերացրեք ձեզ դրությունը խոչըր գործարանում, վորտեղ կան կուսակցության 1000—1500 անդամ։ Փոխանակ կուսակցական կոմիտեյի ընտրությունների համար հրավիրելու ընդհանուր գործարանային կուսակցական ժողով, կուսակցության յերեք անդամից մեկ զեկեղպատի նորմայով հրավիրում են գործարանային կոնֆերենցիա, դրանով իսկ ընդհանուր գործարանային կուսակցական ժողովը փոխարինում կոնֆերենցիայով և ընտրություններ կատարում, այսինքն՝ ըստ եյության, յերեք հոգուց յերկուսին զրկում են ընտրություններին մասնակցելու հնարավորությունից։ Թույլատրելի՞ յե արդյոք այդ։ Պարզ ե, վոր վոչ մի դեպքում թույլատրելի չե։

Ընդհանուր ժողովների գերը նվազեցված ե։ Մի շարք կազմակերպություններում ընդհանուր կուսակցական ժողովները գումարվում են հազվադեպ, տեղական կուսակցական կյանքի հարցերով քիչ են դրազվում։

Ներկուսակցական դեմոկրատիզմի հիմունքների խախտումներն անդրադառնում են նաև կուսակցական ժողովների նախապատրաստման վրա, յերբ կուսակցության անդամները նախապատրաստման չեն, թե ինչ հարցեր են քննարկելու։

Կուսակցական ժողովների բանաձևերը պատրաստելու մասին։ Հաճախ կուսակցական ժողովներում այս կամ այն հարցի վերաբերյալ բանաձևը մտցվում է վաղորոք կամ խորվիւմ այդ գործի վարպետների կողմից հենց ժողովի ժամանակ, առանց հաշվի առնելու, թե ինչի մասին ե խոսելում մտքերի փոխանակության ընթացքում։ Մեզ մոտ ընդունված ե հետեւյալ ձևակերպումը. մշակել վորոշման նախադիծ «մտքերի փոխանակության հիման վրա», իսկ գործականում այդ «մտքերի փոխանակությունը» հենց հաշվի չի առնվալում։

Դա կուսակցության անդամների որինական տիրական իրավունքները մեծագույն չափով չհարգելու արտահայտություն է։

Մեզ մոտ մարդիկ անկարգ ու անբարեխիղճ կերպով անփութունն են վերաբերյալում կուսակցական փաստաթղթերին ու վորոշումներին։ Մենք բոլորս ել պետք ե կուսակցական փաստաթղթերին վերաբերյալու դաս վերցնենք կենտրոնական կոմիտեյից։ Յեթե այժմ մենք բարձրացրել ենք կուսակցական տոմսի դերը և հարգանքը դեպի այն, ապա այդ չի կարելի ասել մեր մյուս շատ կուսակցական փաստաթղթերի մասին։ Ինչպես են կազմվում, կատարվում, պահպանվում նրանք։ Անփույթ կերպով։ Մենք պետք ե կենտրոնական կոմիտեյից սովորենք բացառիկ ճշգրտություն, հոգատարություն և ճշտապահություն ցուցաբերել յուրաքանչյուր կուսակցական փաստաթղթի նկատմամբ։ Այդ տեսակետից մեզ մոտ տեղերում կազմակերպական շատ թափթիվածություն, անփութություն կա։

Որինակ՝ բնավ սակավ կարեռ չե այն հարցը, թե կուսակցական կոմիտեյի բյուրոյի անդամները նիստում քննարկելու համար նյութեր ստացել են արդյոք, թե վոչ, դրանք մի որ առաջն են ստացել, թե դրանք բաժանվում են հենց նիստում։ Դա ևս ներկուսակցական գեմոկրատիան ապահովելու հարց է։

Այդ հարցերը մանրունք են թվում, բայց վերջին հաշվով նրանք վնասում են մեզ, քանի վոր խանդարում են ակտիվի աճմանը և նրա համար դժվարացնում են կուսակցու-

թյան կյանքին ակտիվ ու ինքնուրույն կերպով մասնակցելու հնարավորությունը։ Այդ կապակցությամբ դարպանում են թե՛ հրամանատարություն անելը, թե՛ տժեն տեսակ այլ գործեր։

Յես կուղելի բերել կոլեկտիվ զեկավարման սկզ տւնքները խախտելու որինակներից մեկը ևս։ Խոսքը վերաբերում է այսպիս կոչված «յեռանկյունիներին»։ Կուսկոմի քարտուղարից, ձեռնարկության կամ հիմնարկի զեկավարից և տեղական պրոֆկազմակերպության նախագահից բաղկացած «յեռանկյունու» անվան տակ մեզ մոտ մի շարք կազմակերպություններում, նորմալ ընտրական որդաններից բացի (կուսկոմն ու գործարանային կոմիտեն), պոյություն ունի պաշտոնավես ու կանոնավոր կերպով գործող, վոչ մի կուսակցական ու խորհրդային որենքով չնախատեսված մի յուրահատուկ կազմակերպություն։ Նա հավաքվում է, վորոշումներ ե կայացնում, դիրեկտիվներ ե տալիս ի կատարումըն և այլն։ Կոլեկտիվ զեկավարման տեսակետից, կուսակցական, տնտեսական ու պրոֆմիութենական կազմակերպությունների ճիշտ փոխարաբերությունների տեսակետից, յեռանկյունին ներկայացնում է միանդամայն անթույրաբելի ձև։ Դա ընտանեկանություն է, խոսքը մեկ անել ե, վորպեսզի ամենի դժվար լինի քննադատել։ Յեվ յեթե այդ յերեքը համաձայնության են հանգել, փորձի՛ր, գնա՛, քննադատի՛ր նրանց։ Այդ դիմադրությունը ե անում պրոֆմիութենական կուսակցական կազմակերպությունը, զինաթափ ե անում մի բան, մինչդեռ մեր տնտեսական զեկավարության թերությունների դեմ մզգող պայքարում, իսկ մյուս կողմից՝ զինաթափ ե անում հենց տնտեսավարին իրեն, վորոշետե յեռանկյունին ներկայացնում է կառավարման ինչվոր կոլեգիալ որդանի կայացնում է կառավարման ինչվոր կոլեգիալ որդանի նման մի բան, մինչդեռ մեր տնտեսական զեկավարությունը կառուցված է բոլորովին այլ կերպ։

Յեռանկյունիները ներկայացնում են կոլեկտիվ զեկավարության պարության պարության, ծաղրանկարը, սուրբուղատը։ Ինչի՞ յե հանդում այդ։ Այս մեզ մոտ, լենինյարդի կալինինի անվան գործարանում, կոմունիստին վտարեցին կուսակցությունից այն բանի համար, վոր նա քննադատել եր ստա-

իսանովյան շարժման սխալ զեկավարումը զործարանային վարչության կողմից, այն բանի համար, վոր նա մատնաշուց եր արել զեկավարման թերությունները։ Նրան զամեցին ազմկարարների շարքը։ Մենք վերականգնեցինք կուսակցության անդամի նրա իրավունքները, պատժեցինք նրանց, ովքեր ամենաապորինիու կոպիտ ձևով ելին վարվել նրա հետ։ Բայց այդ փաստն ինքնըստինքյան հնարավոր դարձավ չնորհիվ յեռանկյունու դոյլության, վորը նախապես համաձայնության եր հանգել։ Դիրեկտորն այնտեղ գալիս ու ասում է՝ վրովիցուցի՛չ զործ, հայհոյում են դիրեկցիային։ Նրան ձախնակցում են քարտուղարը և զործարկումի նախադահը։ Այդպիսով ստացվում է քննադատության ճնշում, և այն ժամանակ արդեն այդպիսի զործարանում բանվորների համար զժվար և ճշմարտության հասնել։

Յես կարծում եմ, վոր ժամանակն ե յեռանկյունները վերացնելու հարցը դնել։

Վո՞րն ե գեմոկրատական ցենտրալիզմի հիմունքները խախտելու վերոհիշյալ բոլոր փաստերի վնասը։ Վնասն այն է, վոր նմանորինակ պրակտիկան արդելակում և կուսակցության անդամների ակտիվության ու ինքնազործունեյության աճումը, թուլացնում և տեր լինելու զդացմունքը կուսակցության անդամների մեջ, խանգարում և կուսակցության անդամների զաղափարային ու քաղաքական աճմանը, զրկում և կուսակցության անդամներին կուսորդանների դործունեյությանը վերահսկելու իրենց որինական իրավունքներից և դրանով իսկ խախտում և զեկավարների ու կուսակցական մասսաների ճիշտ փոխհարաբերությունները, թուլացնում և կուսակցությունը՝ նրա առջև ծառացած ինդիքների հանդեպ։

ՎԵՐԱՑՆԵԼ ԱՅՆ ԱՄԵՆԸ, ԻՆՉ ՎՈՐ ԽԱՆԳԱՐՈՒՄ Ե ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱԿՏԻՎԻ ԱՃՄԱՆԸ

Բոլորի համար պարզ է, թե մենք ինչպիսի հոկայական կադրեր պետք ե ունենանք, վորպեսզի հաջողությամբ լուծենը այն խնդիրները, վորոնք թելադրվում են սոցիալիստական շինարարության զարգացմամբ՝ բոլոր ասպարեզնե-

րում, նոր Սահմանադրության կիրառմամբ, կոմունիզմի համար մեր մղելիք հետաղա պայքարով։ Նվիրված ու անձնուրաց վորքան ընկերներ են պետք մեզ թե՛ կուսակցության մեջ, թե՛ նրա սահմաններից դուրս՝ անկուսակցականների միջև։

Մենք մեր կուսակցական պրակտիկայից պետք ե վերացնենք այն ամենը, ինչ վոր արգելակում ե, ինչ վոր խանգարում և ակտիվի աճմանը, նրա ինքնազործունեյության զարգացմանը և նրա գերի բարձրացմանը կուսակցական կյանքի զեկավարման զործում, կուսակցական քաղաքականության բոլոր հարցերի քննարկման մեջ, ինչպես այդ բովում և ներկուսակցական դեմոկրատիայի հիմունքներից։

Ընկեր Ստալինը մեղ շարունակ սովորեցնում է, վոր կուսակցական ակտիվը քաղաքական հատուկ նշանակություն ունի մեր կուսակցության կյանքում։ Նա մեր կուսակցության վորոշումների կենսազործողն է։ Յերբ կուսակցական վորոշումն ընդունված է, նրա ճակատագիրը պոնզում և ակտիվի ձեռքում։ Կուսակցական ակտիվը հանդիսանում և կուսակցության հասարակական կարծիքի արտահայտիչը։

Հենց այն պատճառով, վոր մեր կուսակցությունը կարողացավ ակտիվի լայն խավերին կոմիել ու դաստիարակել լենինի-Ստալինի վոզով, մենք հաջողությամբ լուծեցինք սոցիալիստական շինարարության արմատական խնդիրները, ունենք այդպիսի վեթիարի, առատպելական հաղթանակներ։

Հատկապես այդ կալակցությամբ եր, վոր ընկեր Ստալինի հախաձենությամբ ընդունվեց կենտրոնի հայտնի վորոշումը՝ Համկ(բ)կ կենտրոնի վորոշումները քննարկելու համար կուսակցական ակտիվների ժողովներ դումարելու մասին։

Այդ իսկ պատճառով մենք պետք ե վերացնենք մեր ճանապարհից այն ամենը, ինչ վոր խանգարում և մեր ակտիվի կադրերի ընդարձակմանը, նրա գաղափարային-քաղաքական աճմանը, նրա բոլշևիկյան կոմիտաժությանը, նրա կազմակերպական ամբացմանը։ Այն խնդիրները, վոր պետք ե ճնշենք մենք թե՛ սոցիալիստական շինարարության ասպա-

բեղում, թե՛ առաջիկա նոր դեմոկրատական ընտրությունների կապակցությամբ, հերթի յեն գնում յուրաքանչյուր կոմունիստի ակտիվացման կարեւորագույն հարցը:

Մեր ամբողջ յերկու միլիոնանոց կուսակցական մասսան պետք է լիովին ակտիվացվի, յուրաքանչյուր կոմունիստ պետք է մինի ակտիվ կազմակերպիչ, կուսակցության գործի աղիտատոր ու պրոպագանդիստ: Այդ տեսանկյունով պետք է վերակառուցվի մեր կազմակերպական, աղիտացիոն ու պրոպագանդիստական աշխատանքը:

Մի գիտողություն պրոպագանդիստական աշխատանքի ժամանակն: Մեր պրոպագանդիստական աշխատանքի հիմնական թերությունը, վորը քանից մատնացույց և արել կենտկոմը, այս և, վոր պրոպագանդիստական աշխատանքը հաձայն կատարվում է սփոլաստիկ կերպով, կարված և կուսակցության ընթացիկ և կենսական մարտական խնդիրներից: Մեր պրոպագանդան պետք է գրված լինի այնպես, վորպեսպիս յուրաքանչյուր պրոպագանդիստական խմբակի, յուրաքանչյուր դպրոցի խնդիրը լինի՝ կոմունիստներին դաստիարակել այնպես, վոր կուսակցության անդամների գիտելիքների լրացումն ու նրանց կատարելագործումը մարքսիզմ-ինիզմի գիտության բնագավառում հանդիսանալ վոչ թե ինքնանպատակ, այլ կուսակցության դործի ակտիվ պրոպագանդիստներ դաստիարակելու միջոց: Այս թե ինչը պետք է աչքի առաջ ռւճենալ մեր պրոպագանդիստական աշխատանքում, վորպես նրա կարեւորագույն սկզբունքինը մեկը:

Առանց վերացնելու այն խոշոր թերությունները, վորունենք մենք մեր ներկուսակցական պրակտիկայում և, առջին հերթին, ներկուսակցական դեմոկրատիան ու ընտրականությունը խախտելու դժով, չի կարելի լուծել կուսակցության նոր խնդիրները, վորոնք կարված են դեմոկրատական ընտրությունների հետ, և կուսակցական կազմակերպությունները կարող են անհարակ դտնվել այդ խռների դեմ-հանդիման: Յել յեթե մենք ուզում ենք ընտրությունները կատարել նոր ընտրական սիստեմով, այնպես, ինչպես պահանջում է կուսակցությունը, այնպես,

զում ենք, վեր մեր խորհրդային ու կուսակցական աշխատողները հարզեն մեր որենքները, և մասսան՝ խորհրդային Սահմանադրությունը, ապա մենք պետք եւ ապահովենք կուսակցական աշխատանքի վերակառուցումը՝ մեր կուսակցական կանոնադրությամբ նախատեսված ներկուսակցական դեմոկրատիայի հիմունքների անպայման ու լրիվ իրականացման հիման վրա:

Յելնելով դրանից, մեզ անհրաժեշտ է կիբառել հետեւյալ միջոցառումները:

Առաջին՝ անպայման վերացնել կուսակցիայի պրակտիկան և կանոնադրությանը համապատասխան վերականգնել կուսակցմակերպությունների ղեկավար որդանների ընտրականությունը:

Յերկրորդ՝ արգելել կուսորդանների ընտրությունների ժամանակ ըստ ցուցակների քվեարկելը և բաց քվեարկությունից անցնել գաղտնի ու անհատականորեն կատարվող քվեարկության: Ընդվորում պետք է ապահովված լինի առաջադրված թեկնածությունները մերժելու անօահմանափակ իրավունք կուսակցության անդամների համար և այդ թեկնածությունների քննադրատության անսահմանափակ իրավունք:

Այդ կապակցությամբ անհրաժեշտ է՝ նկատի ունենալով ընտրականության լուրջ խախտումները մեր կուսակցական կազմակերպություններում, կատարել կուսակցական որդանների ընտրությունները՝ սկսած սկզբնական կազմակերպությունների կուսկոմիտեներից և վերջացրած յերկրային, մարզային կոմիտեներով ու ազգային կոմիտուների կենտրոնական կոմիտեներով, անցկացնելով դրանք առաջիկա յերկու ամսում կոմիտեների պահպանական կոմիտեները մինչև մայիսի վերջերը: և ավարտելով ընտրությունները մինչև մայիսի վերջերը: Անհրաժեշտ է այսուհետեւ խստիվ պահպանել կուսորդանների ընտրությունների ժամկետները կանոնադրության համաձայն-սկզբնական կազմակերպություններում՝ տարին մի անգամ, շրջանային ու քաղաքային կազմակերպություններում՝ տարին մերում՝ տարին մի անգամ, յերկրային, մարզային և հաներում՝ տարին մի անգամ, յերկրային, մարզային և հան-

բարետական կազմակերպություններում՝ մեկ և կես տարին
մի անգամ։

Ինչ վերաբերում է կուսակցական ժողովներին, ապա
անհրաժեշտ է կտրականորեն դատապարտել ու արգելել
ընդհանուր կուսակցական ժողովները ցեխային ժողովներով։
Կամ կոնֆերենցիաներով փոխարինելու պրակտիկան և
թույլ չտալ յերկաստիճան ընտրություններ կուսակցական
կազմակերպություններում, այլ մտցնել կուսակցական ստոր
ին որդաններն անմիջականորեն ընդհանուր ժողովներում
ընտրելու պրակտիկան։

Ահա այն առաջարկները, վոր յես կուզեյի ձեակերպել
այստեղ։

ԸՆԿԵՐ ԺԴԱՆՈՎԻ ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՄԿ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ

1937 թվականի փետրվարի 27-ին

Ընկերներ, մտքերի փոխանակության ընթացքում շո-
շափովեց և դիսկուսիայի յենթարկվեց մյուս կազմակերպու-
թյունների, գլխավորապես խորհրդային կազմակերպու-
թյունների աշխատանքի վերակառուցման հարցը։ Այստեղ
խոսեցին և՛ պրոֆմիությունների մասին, և՛ կոմյերիտմիու-
թյան մասին, և՛ մյուս մասսայական կազմակերպություն-
ների մասին։ Այդ չափազանց կարեռը գործ ե և, իհարկե,
մենք պետք ե այդ կազմակերպությունները վերակառու-
ցենք մինչև ընտրություններն այն աշխատանքի վորով,
վոր մենք պետք ե կատարենք կուսակցական կազմակերպու-
թյան մեջ։

Ե՛վ խորհրդային, և՛ պրոֆմիութենական, և՛ կոմյերի-
տական կազմակերպությունների վերակառուցման պայմանն
ե հանդիտանում նախ և առաջ հենց կուսակցական կազմա-
կերպության վերակառուցումը՝ փորպես հիմնական դեկա-
վար ուժի, վորպես մեր բոլոր կազմակերպությունների
հիմնական դեկավար կորիզի, ինչպես այդ դրի յե առնված
մեր Սահմանադրության մեջ։ Յես չեմ կարծում, վոր մենք
պետք ե հրաժարվենք և արդեն այժմ աշխատանք չկատա-
րենք մասսայական կազմակերպությունների—պրոֆմիու-
թյունների, խորհուրդների, կոմյերիտմիության և այլնի-
աշխատանքը վճռաբար բարելավելու ուղղությամբ, բայց
նրանց աշխատանքի խական վերակառուցումն, իհարկե,
կազմված ե այն բանի հետ, թե վո՞ր չափով կհաջողվի վե-
րակառուցել կուսակազմակերպություններին—այդ ե ամեն
բանի արմատը։

Այժմ կուսակցական կազմակերպությունների ընտրակա-
նության խախտման, կոռագտացիայի տարածման և ներկու-

սակցական գեմոկրատիայի ու դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքների մյուս խախտումների մասըն։ Մաքերի մոռիսանակությունից յերևում ե, վոր բանը չատ հեռու յեղացել, վոր անցյալ ժամանակաշրջանի սովորութներն ու մնացուկները դեռ ամուր նստած են մեր աշխատողների դիմում, վորոնք տարվել են մեր մեծ հաջողություններով։ Այդ սովորութներն ու մնացուկներն, անտարակույս, կապված են վորոշ վոչմարքսիստական հայացքների հետ, վորոնք ընկեր Ստալինը խարազանել ե դեռ XIII կուսկոնֆերենցիայում 1924 թվականին, և վորոնք յերազ են այն բացարձակապես վոչմարքսիստական պատկերացումներից, թե իր մեր կուսակցությունը հանդիսանում է «վոչ թե ինքնագործունյա որդանիզմ», վորն ապրում ե ինքնուրույն դադափարային ու պրակտիկ կանքով, այլ ստորին, միջին ու բարձրագույն հիմնարկների սիստեմի նման ինչ-վոր մի բան։ Ընկեր Ստալինն այն ժամանակ մատնանշում եր, վոր պայքարն այդպիսի հայացքների դեմ կուսակցության հերթական խնդիրն ե հանդիսանում։ Ընկեր Ստալինի այդ ցուցմներն անհրաժեշտ ե հիշեցնել դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքների բյուրոկրատիկ խեղաթյուրման փաստերի կապակցությամբ։

Կուսակցական կյանքից ղեկավար աշխատողների վորոշ կարգածության մասին այսուեղ խոսեցին մի շարք ընկերներ և առանձնապես համոզիչ կերպով խոսեց ընկեր Խատայելիքը։

Ընկեր Խատայելիքը Դնելուպակեարուլսի կազմակերպության փորձի հիման վրա ցույց տվեց, թե ինչպես տնտեսական ընթացիկ հարցերով տարավելը հասցնում ե կուսակցական աշխատանքի ճաշակը կորցնելուն, կուսակցական աշխատանքի թուլացմանը։ Այդպիսի դրությունը տիպիկ ե։ Պետք ե հիշեցնել, վոր մեղ ծանրաբեռնութեան վեցամսամանը հարցերով ի վնաս կուսակցական աշխատանքի, մենք մոռանում ենք, վոր կուսակցական աշխատանքը մեր փոխարեն վոչ վոք չի կատարի։ Կուսակցական աշխատանքի ղեկավարությունը կուսաշխատողների գլխավոր Փունկցիան ե. պատասխանատվությունն այդ աշխատանքի վիճակի համար ամբողջապես և լիովին ընկնում ե նրանց վրա։

Ընկեր կարակովի ճառը ցուցանիշ եր այն բանի, վոր կուսակցական աշխատանքը մի շարք կազմակերպություններում խմբավորության ե տրված։ Ընկեր Կարակովը խոսեց ամեն ինչի մասին, բացի կուսակցական աշխատանքից։ Խոսեց կինոմեխանիկի մասին, կինոյի նյութական կողմի մասին, ռադիոյի մասին։ Այս բոլորը չափազանց կարեւոր և չափազանց եյտական բաններ են։ Բայց յերբ ընկեր Մոլոտովը հարց գրեց ընկեր Կարակովի առաջ, թե Ուրալում ինչպիս և կոռպատացիայի դրությունը, նա անցավ այդհարցի կողքով։ Նշանակում ե՝ կուսակցական աշխատանքի հարցերը հիմնական չեն հանդիսանում ընկեր Կարակովի համար։ Այդ ցույց ե տալիս, վոր կուսակցական աշխատանքի թերապնահատումը հաղթահարված չե, վոր այդտեսակետից անհրաժեշտ բեկում դեռ ստեղծված չե և վոր պետք ե սկսել ղեկավարներից։ Շրջադարձը դեպի կուսակցական կազմակերպությունների ղեկավարության շրջադարձից։

Միքանի խոսք ընտրությունների կարդի վերաբերյալ։ Այսուեղ ընկերները խոսեցին այն մասին, վոր անհրաժեշտ ե ցուցումներ տալ, թե ի՞նչպես անցկացնել գաղտնի քվեարկությունը. քվեատութիւն կլինի, թե՞ դնդակներ կլորին։ Այդ չափազանց եյտական դորձ ե, բայց այժմ մեղ անհրաժեշտ ե ունենալ վոչ թե հրահանող, այլ պետք ե խմանալ՝ հավանության արժանանանում ե արդյոք ինքը՝ սկզբունքը։ Գաղտնի քվեարկության սկզբունքի դեմ այսուեղ վոչ չառարկեց, ընդհակառակը, ընկերներն ընդգծում ենին դադար կարևորությունը և եյտական նշանակությունների իսկական աղատությունների սապահովելու համար։ Ինքը՝ ընտրությունների պրոցեսը և բատ յերևութիւն, բաժանման կլինի յերկու փուլի։ Առաջին փուլն այն ե, յերբ պեղի յեռնենում թեկնածությունների միանդամայն բացահայտ քննարկումը։ Յուրաքանչյուրն իրավունք ունի ընտրվող կուսակցական կոմիտեի համար առաջարկելու և պաշտպանելու ամեն մի թեկնածություն։ Այդ առաջին փուլն ե՝ Այնուհետև, քննարկված թեկնածությունները քվեարկության վակ քվեարկության միջոցով։

Կարելի յէ վորպես նմուշ և որինակ վերցնել կենտկոմի ընտրությունը կուսակցական համագումարներում, վորտեղ ընտրությունները կատարվում են գաղտնի քվեարկությամբ: Յես կարծում եմ, վոր այդ պրակտիկան կարող ե լուզին ու ամբողջությամբ ոգտագործվել տեղական կուսակցական կաղմակերպությունների կողմից:

Այժմ կոռպտացիայի վերաբերյալ: Ընկերներից վոմանք մատնանշում են, թե կոռպտացիայի լայն կիրառումը կատված ե այն բանի հետ, վոր անհրաժեշտ ե լինում տեղափոխնել քարտուղարներին ու մյուս պատասխանատու կուսակցական աշխատողներին և դրա հետեւանքով նրանց մըտցնել այս կամ այն կուսակցական կոմիտեյի կազմի մեջ: Յեթե մեղ մոտ կուսակցական կաղմակերպությունների ընտրությունները տեղի ունենան ոտուրդ սահմանիած ժամկետներին, ապա դժվարություն չի առաջ գա այն բանից, վոր մարդ 2—3 ամիս մնա ընտրված: Նա կկատարի քարտուղարի պարտականությունները, բայց կուսակցական կոմիտեյի անդամ չի լինի, իսկ առաջիկա կոնֆերենցիայում կարող ե ընտրվել կուսակցական կոմիտեյի մեջ: Մեղ մոտ այժմ այնպես ե պատահում, վոր կուսակցական ղեկավարը կուսակցական կոմիտեյի անդամ ե դառնում այս կամ այն կուսակցական պոստն ստանալու հետ միաժամանակ: Այդ բնավ պարտադիր չե: Մինչև կոնֆերենցիան նա քարտուղարի պարտականությունները կարող ե կատարել առանց կուսակցական կոմիտեյի անդամ լինելու:

Հաջորդ դիտողությունը: Մեղ մոտ կոռպտացիան վորոշ չափով կապված ե յեղել կադրերի հոսունության, աշխատողների հաճախակի տեղափոխությունների հետ:

Հանդես յեկող ընկերներն այստեղ խօսում եյին կաղըրերով «աղքատ» լինելու մասին, վորն, իր թե, նրանց հարկադրում ե մշտապես վերախմբավորումներ և մարդկանց տեղափոխություններ կատարել: Նրանք մոռանում են, վոր նոր կադրերի առաջքաշման համար ոեղերվներ ու հնարավորություններ մենք բացառիկ կերպով շատ ունենք: Դուք տեսեք, թե մեղ մոտ ինչպես արագ են աճում կուսակցական և անկուսակցական մարդիկ, նայեցեք ստախանովականնե-

րի, ասենք վոչ միայն ստախանովականների, աճմանը: Վերցրեք կարմիր բանակի հրամանատարների և արդյունաբերության աշխատողների կանոնց շարժումը, հիշեցնեք վերջերս տեղի ունեցած համամիութենական խորհրդակցությունները: Իրենց յելույթների պայծառության, հյութալիության, լիարժեքության խմաստով, ադիտացիայի նոր ձեռի ու նոր մեթոդների ընտրության խմաստով, ճառերի թեմաների, բովանդակության ու ձեփի հարստությամբ նրանցից շատերը, աղնիվ խոռոք, կծալեն ու գրապանը կղնեն մեր վորոշ յերդվյալ ու խունացած ադիտատորներին: Մեր շուրջը կան անթիվ քանակությամբ մարդիկ, մարդիկ չափականց շատ են, այնպիսի մարդիկ, վորոնք վաղուց արդեն սպասում են առաջքաշման, բայց մենք նրանց չենք տեսնում մեղ մոտ զեմոնկրատիզմի պակասության հետեւանքով, պակաս, վորը մեղ խանդարում ե տեսնել նոր մարդկանց, և շատ մարդիկ մեղ մոտ լճանում են, իսկ լճանալով և մոռացության տրվելով՝ նրանք զժողոհների ուղերձ են դառնում մեր կուսակցության ներսում: Այս տեսակետից, գաղտնի քվեարկության անցնելը, մեր կուսակցական կազմակերպությունների խկական ընտրականության անցնելը կողնի մեղ վեր հանելու կուսակցական կադրերի այն հոկայական ուղերձը, վոր մենք ունենք: Դեռ լենինը, այն ժամանակներում, յերբ մենք աշխատողների կադրեր խկապես քիչ ունեցինք, ասում եր, վոր հարկավոր ե պատժել նրանց, ովքեր ասում են, թե մենք կադրեր քիչ ունենք:

Միքանի խոռոք ադիտացիայի մասին: Այստեղ ընկերները ճիշտ եյին ասում, վոր մեր ադիտացիան գլխավորապես ընդդրկում ե առաջամարտ բանվորներին, առանձին կուտընտեսություններ: Նա բնավ չի ընդդրկում այն մարդկանց հոկայական շերտերը, վորոնք պատրաստ են մեղ ոգնելու, ամեն բոլեք պատրաստ են արձականութելու և լինելու մեր բարեկամները, լինելու վոչ կուսակցական բոլցեկներ: Յես այստեղ նկատի ունեմ ինտելիգենցիային, ծառայողներին, տնային տնտեսուհիներին և վոչ միայն նրանց: Պետք ե ուղղակի ասել, վոր մենք ադիտացիոն աշխատանքով չենք ընդդրկում նույնիսկ խոչըր ձեռնարկությունների բոլոր

բանվորներին, իսկ գյուղում աշխատում ենք կոլտնտեսությունների միայն մի մասում: Մենք ունենք կոլտնտեսություններ, վորտեղ շրջանային ղեկավարները լինում են տարին 2—3 անդամ, իսկ կան չատ կոլտնտեսություններ, մեծ մասամբ թույլ—և դրանումն է ոլխավոր վտանգը—խուզ անկյուններ, ուր վոչ վոք չի այցելում, վորովհետեւ նրանցից ձեռք են քաշել: Այդ բացարձակապես սխալ ե, պետք ե ուժեղ կերպով աշխատել հենց այն բանվորների, կոլտնտեսականների, ծառայողների և այլ աշխատողների մեջ, վորոնք դեռ բավարար չափով ընդդրկված չեն մեր քաղաքական աղղեցությամբ:

Մեր աղիտացիայի բովանդակությունը հաճախ ուղղակի և անկեղծորեն չի պատասխանում բանվորների առաջադրած հարցերին: Մեր յուրաքանչյուր միջոցառման կարակցությամբ մենք ստանում ենք մեծ թվով հարցեր ու արձագանքներ, կուսակցական կոմիտեներում կազմում են այդ հարցերի ցուցակներ, բայց հաճախ այդ հարցերին չեն պատասխանում, խորսավում են դժվար հարցերին պատասխանելուց: Այդ ճիշտ չե, մեր աղիտացիան պետք ե պատասխանի բանվորների բոլոր հարցերին և առանց ուշադրության, առանց պատասխանի չժողնի դրանք, վորովհետեւ յեթե մենք չպատասխաննենք, ապա մեր փոխարեն վորեն մեկը կպատասխանի, —«սուրբ տեղը դատարկ չի մնա»:

Յեվ, վերջապես, մեր աղիտկուեկտիվների հարցը, վորոնց աշխատանքը չափազանց մոռացության և տրված և յերեսի վրա յե թողնված: Նրանք նույնպես սպասարկում են դիմավորապես Փարբիկա-դործարանային ձեռնարկություններին: Իսկ ինչ վերաբերում ե այնպիսի աղիտատորներին, վորոնք աշխատեն բնակվարձկոոպներում, ԲՈՒՀ-երում, ու ԲՏՈՒՀ-ներում, ծառայողների, ինտելիդենցիայի մեջ, այս բանին մեր կուսկազմակերպությունները դեռ չեն հասել: Անհրաժեշտ ե ունենալ մարդկանց նաև այդպիսի կադրեր: Այստեղ մեր հնարավորությունները բացառիկ են: Ամեն ինչ մեր ձեռքումն է գտնվում—թե՛ ուղիոն, թե՛ կի-

նոն, թե՛ թերթերը, թե՛ սատանան դիտե՛ աղիտացիայի վորքա՞ն միջոցներ:

Մենք ողտադրությում ենք արդյոք այդ միջոցները: Միանդամայն անբավարար չափով: Խնդիրն այն է, վոր մենք կանոնավորենք այդ աշխատանքը, և դա չափաղանց լուրջ գործ է:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸՆՍՅԱ-Ի ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՃՐԴԻ՝ ՆՈՐ
ԸՆՏՐԱԿԱՆ ՄԻՍՏԵՄՈՎ ԿԱՏԱՐԵԼԻՔ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՀԱՄԱՊԱՏԱԽԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Համ և (թ) և Կենտկոսի պղեճումը բանաձեզն
քնից ԺԴԱԿՆՈՎԻ զեկուցման առքիվ՝
բնդունված 1937 թ. փետրվարի 27-ին

ԱՄՀ Միության նոր Սահմանադրությունը մտցնելը
շրջադարձ և նշանակում յերկրի քաղաքական կյանքում:
Այդ շրջադարձի եյությունն է ընտրական սիստեմի հետագա
գեմոկրատացումը՝ խորհուրդների վոչ լիովին հավասար
ընտրությունները հավասարով, բաղմաստիճանը՝ ուղղակի-
ով, բացը՝ փակով փոխարինելու իմաստով:

Յեթե նոր Սահմանադրությունը մտցնելուց առաջ գո-
յություն ունեյին ընտրական իրավունքի սահմանափակում-
ներ պաշտամունքի սպասավորների, նախկին սպիտակ-գվար-
դիականների, նախկին մարդկանց և հանրողուտ աշխա-
տանքով չզբաղվող անձերի համար, ապա նոր Սահմանա-
դրությունը դեն և նետում ընտրական իրավունքի ամեն մի
սահմանափակում քաղաքացիների այդ կատեգորիաների
համար, ընդհանուր դարձնելով դեպուտատների ընտրու-
թյունները:

Յեթե առաջ դեպուտատների ընտրությունները հավա-
սար չեյին, քանի վոր գոյություն ունեյին ընտրություննե-
րի տարրեր նորմաներ քաղաքային և դյուզական բնակչու-
թյան համար, ապա այժմ ընտրությունների հավասարու-
թյունը սահմանափակելու անհրաժեշտությունը վերացված
է, և բոլոր քաղաքացիներն իրավունք ունեն հավասար հի-
մունքներով մասնակցելու ընտրություններին:

Յեթե առաջ Խորհրդային իշխանության միջին ու բար-
ձը որպանների ընտրությունները բազմաստիճան եյին, ա-
պա այժմ, ըստ նոր Սահմանադրության, բոլոր խորհուրդ-
ների ընտրությունների՝ սկսած գյուղականներից ու քաղա-
քայիններից մինչև ֆերազույն Խորհուրդը, կատարելու յեն
քաղաքացիներն անմիջականորեն ուղղակի ընտրությունների
միջոցով:

Յեթե առաջ խորհուրդների համար գեղուտատների
ընտրությունները կատարվում եյին բաց քվեարկությամբ և

ցուցակներով, ապա այժմ գեղուտատների ընտրությունների ժամանակ քիեարկությունը լինելու յե դադանի և վոչ թե ցուցակներով, այլ ըստ ընտրական շրջանների առաջադրովների:

Վերջապես, Սահմանադրությունը մտցնում է համաժողովական հարցում (ուժիքենդում):

Ընտրական սիստեմի այդ փոփոխությունները նշանակում են խորհրդային որդանների նկատմամբ մասսաների ունեցած վերահսկողության ուժեղացումը և մասսաների առաջ խորհրդային որդանների ունեցած պատասխանատվության ուժեղացումը:

Գաղտնի քիեարկությամբ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունք մտցնելու հետևանքը կիխնի մասսաների քաղաքական ակտիվության հետագա ուժեղացումը, աշխատավորների նոր խավերի ներդրավումը պետության կառավարմանը: Դրանով իսկ պրոլետարիատի դիկտատուրան դառնում է բանվոր դասակարգի կողմից հասարակության զեկատակարման ավելի ճկուն, և հետեւարար ալելի հզոր սիստեմ, բանվոր դասակարգի դիկտատուրայի բազան ընդարձակվում է, նրա հիմքն ավելի հաստատուն է դառնում:

Այդ շրջադարձը կատարելապես զինված դիմավորելու համար՝ կուտակցությունն այդ շրջադարձի դլուխ պետք է կանգնի և լիակատար չափով ապահովի իր զեկավար դերը յերկրի գերադույն որդանների առաջիկա ընտրությունների ժամանակ:

Պատրաստ են արդյոք կուտակցական կաղմակերպություններն այդ տեսակ զեկավարման համար:

Ի՞նչ է պահանջվում կուտակցությունից, վորպեսդի նակարողանա կանոններ այդ շրջադարձի դլուխ, նոր, մինչև վերջը զեմովկրատական ընտրությունների դլուխ:

Դրա համար պահանջվում է, վոր կուտակցություններն անցկացնի հետևողական զեմովկրատական պրակտիկա, վոր նա ներկուսակցական կյանքում մինչեւ վերջն անցկացնի զեմովկրատական ցենտրալիզմի հիմունքները, ինչպես այդ պահանջում է կուտակցության կանոնադրությունը, վոր նա ինքն ունենա այն անհրաժեշտ պայմանները, վորոնցին լինում այնուածական կառավարման առաջարկությունը:

Հորոհիվ կուսակցության բոլոր որդաններն ընտրությունների ժամանակակից քննադատությունը և ինքնազնադատությունը գարզանան լիակատար չափով, վոր կուսակցական մասսայի առջև կուսակցական որդանների պատասխանատվությունը լիակատար լինի և վոր ինքը՝ կուսակցական մասսան լիովին ակտիվացվի:

Կարելի՞ յե արդյոք ասել, թե կուսակցական բոլոր կաղմակերպություններն արդեն պատրաստ են կատարելու այդ ոլայմանները, թե նրանք արդեն լիովին վերակտուցվել են զեմովկրատական ձևով:

Դժբախտաբար լիակատար վստահությամբ չի կարելի ասել այդ:

Այդ մասին և ասում կուսակցության կանոնադրության և ներկուսակցական գեմովկրատիզմի հիմունքների խախտման պրակտիկան, վոր դոյցություն ունի միքանի կաղմակերպություններում:

Վարո՞նք են այդ խախտումները:

Կուսակցական որդանների ընտրականությունը, վորը սահմանված ե կուսակցության կանոնադրությամբ, միշտ չափը կաղմակերպություններում խախտվել է: Կուսկագմակերպությունները չեն պահպանում կուսակցական որդանների ընտրությունների այն ժամանեները, վորոնք սահմանված են կուսակցության կանոնադրությամբ: Լայն չափով տարածվել է զանազան զեկավար աշխատողներին վորպես շրջկոմների, քաղկոմների, յերկրկոմների, մարդկոմների, ազգային կոմիտեների կենտրոնների պլենումների անդամներ կոռպատացիայի յենթարկելու վորոնք չարդարացվող պրակտիկան:

Վերադարձ կուսակցական որդանների կողմից կուսակցական կոմիտեների քարտուղարներին հաստատելու այն կարգը, վորը սահմանված է կուսակցության կանոնադրությամբ, միշտ չափը կուսկագմակերպություններում փաստորեն վերածված է նշանակման սխտեմի: Կուսկոմների քարտուղարների հաստատումը հաճախ տեղի յե ունենում նախքան նրանց ընտրվելը տեղական կուսկագմակերպություններում, իսկ վործնականում դրա հետևանքն է լինում այն, վոր տե-

ղական կուսկազմակերպությունները հնարավորություն չեն ունենում քննարկելու հանձնարարվող աշխատողի թեկնածությունը:

Ընտրական պաշտոններում հաստատելը և աշխատանքից հեռացնելը հաճախ տեղի յեւ ունենում կուսորդանների հարցման կարգով ընդունված վորոշումների միջոցով և առանց կուսակցական կոմիտեյի պլենումին հանձնարարելու նոր աշխատողների թեկնածությունները, ինչպես և առանց այս կամ այն կուսակցական զեկավարի հետացման դրդապատճառները կուսկազմակերպություններին բացատրելու:

Ինչ վերաբերում է կուսորդանների ընտրություններին, ապա մինչև այժմ ել գոյություն ունի մի պրակտիկա, վորքի համաձայն թեկնածուների ցուցակների քննարկումը տեղի յեւ ունենում միմիայն նախնական խորհրդակցություններում, ավագների խորհուրդներում, պատգամագորություններում՝ ժողովներում, ըստվորում, վորպես կանոն, թեկնածությունների չուրջը հենց պլենումներում ու կոնֆերենցիաներում վիճաբանություններ չեն բացվում, քիչերկությունը կատարվում է ցուցակով և վոչ անձնապես, ու այդպիսով ընտրական պրոցեդուրան հասարակ ձևականության և վերածվում:

Դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքների խախտման այս բոլոր փաստերը վնաս են հասցնում կուսակցությանը, վորովհետև դրանք արդելակում են կուսակցության անդամների ակտիվության աճումը, մեր կուսակցության կյանքում քաղաքական հատուկ նշանակություն ունեցող ակտիվին դրկում են զեկավար աշխատանքին մասնակցելու հնարավությունից, կուսակցության անդամներին դրկում են կուսորդանների գործունեյությանը վերահսկելու իրենց ուրինական իրավունքներից և դրանով իսկ խախտում են զեկավարների ու կուսակցական մասսաների ճիշտ փոխհարաբերությունները:

Այդպիսի պրակտիկայի ցայտուն որինակներ են հանդիսանում վերջին ժամանակներս Համկ(բ)կ կենտկոմի կողմէց հայտնաբերված այն փաստերը, վորոնք ցույց են տալիս կուսակցական-քաղաքական աշխատանքի ազադակող կերպով անուշադրության մատնված լինելը Ազով-Սևծո-

վյան յերկրկոմում, Կիեվի մարզկոմում և Ռևլախնայի Կ(բ)կ կենտկոմում և այլ կուսկազմակերպություններում, վորոնք արտօհայտվում են կուսակցության կանոնադրության ու դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքների կոպիտ խախտումներով՝ կուսորդանների ընտրականությունից հեռանցու և կոռպուտացիայի անհանդուրժելի պրակտիկան մտցնելու իմաստով:

Համկ(բ)կ կենտկոմի պլենումն ընդգծում է, վոր Կիեվի մարզկոմում ու Ազով-Սևծովյան յերկրամասում հայտնաբերված սխալ զեկավարման որինակները յեղակի չեն, այլ այս այն չափով հատուկ են բոլոր յերկրային ու մարդացին կուսկազմակերպություններին:

Համկ(բ)կ կենտկոմի պլենումը գտնում է, վոր այդ եղանց նման թերությունների վերացումն այն անհրաժեշտ պայմանն է, առանց վորի չեն կարող իրադործվել կուսակցության այն նոր խնդիրները, վորոնք առաջ են յեկել յերկրի քաղաքական կյանքում տեղի ունեցած չրջադարձի փաստի կապակցությամբ, նոր Սահմանադրության ընդունման ու դադանի քիչերակությամբ ընդհանուր, հայլասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա յերկրի դերագույն որդանների առաջիկա ընտրությունների կապակցությամբ:

Այդ պատճառով անհրաժեշտ վերակառուցել կուսակցական աշխատանքը, հիմք ունենալով կուսակցության կանոնադրության ամսահայտնական գործությունների հետեւ կուսակցության միակատար կենսագործությունները:

Համկ(բ)կ կենտկոմի ոլենումն անհրաժեշտ է համարում իրականացնել և պարտավորեցնում երազը կուսկազմակերպություններին՝ կենսագործել հետեւյալ միջոցառումները:

1. Վերայնել կուսկոմիտեներում վորպես անդամներ կոռպուտացիայի յենթարկելու պրակտիկան և վերականգնել կուսկազմակերպությունների զեկավար որդանների ընտրականությունը՝ կուսակցության կանոնադրության համապատասխան:

2. Արգելել կուսորդանների ընտրությունների ժամանակ ցուցակներով քիչերակելը: Քիչերակումը կատարել ըստ

առանձին թեկնածությունների, ընդոմին պահպանելով
կուսակցության բոլոր անդամների համար թեկնածուներին
մերժելու և նրանց քննադատելու անսահմանափակի իրա-
վունք:

3. Կուսորդանների ընտրությունների համար սահմանել
թեկնածուների փակ (գաղտնի) քվեարկություն:

4. Բոլոր կուսկազմակերպություններում անցկացնել
կուսորդանների ընտրություններ, սկսած սկզբնական կուս-
կազմակերպությունների կուսկոմիտեներից և վերջացրած-
յերկրային, մարզային կոմիտեներով ու ազգային կոմիտե-
ների կենտրոններով, ավարտելով ընտրությունները վոչ
ուշ մայիսի 20-ից:

5. Պարտավորեցնել բոլոր կուսկազմակերպություննե-
րին՝ կուսակցության կանոնադրության համապատասխան
խստիվ պահպանել կուսորդանների ընտրությունների ժամ-
կետները. սկզբնական կուսկազմակերպություններում—տա-
րին մեկ անդամ, շրջանային ու քաղաքային կազմակերպու-
թյուններում—տարին մեկ անդամ, մարզային, յերկրային
ու հանրապետական կազմակերպություններում—մեկ և կես
տարին մեկ անդամ:

6. Սկզբնական կուսկազմակերպություններում ապահո-
վել համագործարանային ժողովներում կուսկոմներ ընտրե-
լու կարգի խիստ պահպանումը, թույլ չտալով ժողովների
փոխարինումը կոնֆերենցիաներով:

7. Լիկիվագիտայի յենթարկել ընդհանուր ժողովները
փաստորեն վերացնելու և ընդհանուր ժողովները ցեխային
ժողովներով ու կոնֆերենցիաներով փոխարինելու այն
պրակտիկան, վոր զոյսություն ունի մի շարք սկզբնական
կազմակերպություններում:

ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵԶ

ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ՝ 1937 ԹՎ.Ի ՓԵ-

ՏԸՐՎԱՐԻ 26-ԻՆ

Շրջադարձը յերկրի բաղաբան կյանքում և մեր խնդիրները 5

Կուսակցական որգանների ընտրականության խախտումն ան-
համատեղելի յերաշխիքի կագմակերպական սկզբանե-
ների հետ 12

Ներկուսակցական դեմոկրատիան կուսակցական կյանքի ան-
խախտ 21

Վերացնել այն ամենը, ինչ վոր խանգարում է կուսակցական
ակտիվիտետը 28

ԸՆԿԵՐ ԺԳԱՆՈՎԻ ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ
ՊԼԵՆՈՒՄՈՒՄ՝ 1937 ԹՎ.Ի ՓԵՏՎԱՐԻ 27-ԻՆ 33

ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱԳԵՎՆ ԸՆԿԵՐ ԺԳԱՆՈՎԻ
ԶԵԿՈՒՅՑՄԱՆ ԱՌԹԻՎ՝ ԸՆԴՈՒՆՎԱԾ 1937 ԹՎ.Ի ՓԵՏՎԱՐԻ
27-ԻՆ 40



Թարգմ. Յե. Տ. Մինասյան
Խմբագիր. Լ. Պապյան
Տեխն. խմբ. Ա. Խաչատրյան
Սրբագրիչ Ռ. Վարդապետյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Գլանիտի լիազոր № կ. 2541 հրատ. № 758
Պատվեր № 247, տիրած 5000
Հանձնված և արտադրության 17/XI 1939 թ.
Ստորագրվել և առաջընթաց 26/XI 1939 թ.
Դինը 50 դ.

Քաղաքական գրականության պետական հրատարակություն տպարան
Յերևան, Ալավերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0187024

Файл 50 ч.

А. А. ЖДАНОВ

ПОДГОТОВКА ПАРТИЙНЫХ ОРГАНИЗАЦИЙ К ВЫБОРАМ
В ВЕРХОВНЫЙ СОВЕТ СССР ПО НОВОЙ ИЗБИРАТЕЛЬНОЙ
СИСТЕМЕ И СООТВЕТСТВУЮЩАЯ ПЕРЕСТРОЙКА
ПАРТИЙНО-ПОЛИТИЧЕСКОЙ РАБОТЫ

Доклад на Пленуме ЦК ВКП(б)

26 февраля 1937 г.

Государственное издательство политической литературы
Ереван, 1939